ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2015Թ.
ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ըստ սահմանադրության Հայաստանը երկրի ընտրովի ղեկավար և միապալատ օրենսդիր կառույց (Ազգային ժողով) ունեցող հանրապետություն է: Ազգային ժողովում Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) մեծամասնություն է կազմում և առաջնորդվելով Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից՝ շարունակում է գերիշխող դիրք գրավել երկրի քաղաքական կյանքում: Երկրում 2013թ. անցկացվել են նախագահական, իսկ 2012թ.՝ խորհրդարանական ընտրություններ: Ըստ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), նախագահական ընտրությունները եղել են լավ կազմակերպված, սակայն ունեցել են թերություններ, այդ թվում՝ ոչ հավասար խաղի պայմաններ, քվեարկության օրը գրանցված որոշ լուրջ խախտումներ և ընտրական գործընթացի ամբողջականության (բարեվարքության) վերաբերյալ մտահոգություններ: Նմանատիպ թերությունները ստվեր էին նետել 2012թ. Ազգային ժողովի ընտրությունների վրա: Քաղաքացիական իշխանություններն արդյունավետ վերահսկողություն են պահպանել անվտանգության ուժերի նկատմամբ:

Տարվա ընթացքում մարդու իրավունքների ամենանշանակալի խնդիրներն են եղել ՀՀԿ-ի գերակա իշխանությունը պահպանելու համար՝ պաշտոնյաների կողմից կառավարական ռեսուրսների օգտագործումը, աջակիցներին հարստացնելու և իրավապահպան ու դատական համակարգերը կոռումպացնելու նպատակով՝երկրի տնտեսական վերնախավի կողմից տնտեսական և քաղաքական իշխանության օգտագործումը, ինչպես նաև դատական համակարգի անկախության սահմանափակումը: Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեի ընթացքում տեղական և միջազգային դիտորները, քաղաքացիական հասարակության անդամներն ու լրագրողները հաղորդել են բազմաթիվ ընտրախախտումների՝ այդ թվում՝ վարչական ռեսուրսների օգտագործման, բազմաքվեարկության,

լցոնումների և պաշտոնյաների կողմից հանձնաժողովի անդամների ու դիտորդների վրա ճնշում գործադրելու մասին: Դեկտեմբերի 18-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն (ՀՀՔԿ) հարուցել էր հանրաքվեին առնչվող 34 քրեական գործ: Արձանագրված այլ խնդիրներից և չարաշահումներից են զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցված կասկածելի մահվան դեպքերը և զինծառայողների նկատմամբ սպայական կազմի և զինակիցների կողմից շարունակական ու անպատիժ ահաբեկումներն (բուլինգ) ու վատ վերաբերմունքը: Ոստիկանությունը դաժանություններ և խոշտանգումներ է կիրառել խոստովանություններ կորզելու նպատակով և ըստ հաղորդումների, ծեծի ու բռնության է ենթարկել քաղաքացիներին ձերբակալությունների և հարցաքննությունների ընթացում: Որոշ բանտեր եղել են գերբնակեցված, հակասանիտարական պայմաններում, և բանտարկյալներին բուժսպասարկում չի ապահովվել: Իրավասու մարմինները շարունակել են կամայականորեն ձերբակալել և առանց ողջամիտ կասկածի բերման ենթարկել անձանց : Դատական քննությունները հաճախ երկար են տևել, և դատարանները արդար դատաքննություն ապահովող օրենքներ չեն կիրառել: Իշխանությունները համարժեքորեն չեն կիրառել պետության կողմից անձնական տվյալների անձեռնմխելիության ու ապօրինի խուզարկություններն արգելող օրենքները: Լրատվամիջոցներում բացակայել է քաղաքական կարծիքի բազմազանությունը, և աղբյուրների հիմնական մասն արտացոլել է կառավարության տեսակետները: Ինքնագրաքննությունը խնդիր է եղել: Եղել են արժանահավատ հաղորդումներ առ այն, որ ոստիկանությունը թիրախավորել է լրագրողներին քաղաքացիական բողոքների ժամանակ: Հավաքների կազմակերպման ազատության նկատմամբ իշխանությունների հարգանքն անհավասար է եղել: Ականավոր ուսումնական հաստատությունների կառավարման ոլորտում ավագ պաշտոնյաների դերը և ուսանողական միջոցառումների քաղաքականացումը խոչընդոտել են ակադեմիական ազատությունը: Իշխանությունները սահմանափակել են մասնակցությունը քաղաքական գործընթացին և քաղաքական բազմակարծությանը: Կառավարության կողմից սահմանափակումներն ազդել են փոքրամասնություն կազմող կրոնական որոշ խմբերի վրա, և կրոնական փոքրամասնություն կազմող խմբերի

անդամները տուժել են հասարակական խտրականությունից: Շարունակել է խնդրահարույց մնալ ներընտանեկան բռնությունը: Նորածին տղաների ու աղջիկների սեռերի համամասնության մեծ անհավասարակշռությունը մատնանշել է սեռով պայմանավորված գենդերային կողմնակալ ընտրությունը: Խնդիր է եղել մարդկանց թրաֆիքինգը: Հաշմանդամություն ունեցող անձիք ենթարկվել են խտրականության կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) և միջսեռական (ԼԳԲՏԻ) անձիք պաշտոնյաների, ներառյալ ոստիկանության, զինվորական ու քրեակատարողական մարմինների կողմից անպատժելիորեն ենթարկվել են չարաշահումների և խտրականության. նրանց նկատմամբ առկա է եղել նաև հասարակության խտրական վերաբերմունքը: Հասարակությունը խարանել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց: Կառավարությունը սահմանափակել է աշխատողների իրավունքները, և թույլ կերպով կիրառել աշխատանքային օրենսդրությունը: Թեև կառավորությունը որոշ քայլեր է ձեռնարկել պատժել անվտանգության ուժերի և այլ կառույցների մի շարք պաշտոնյաների մարդու իրավունքների չարաշահումների համար, անպատժելիության պայմաններում այդ չարաշահումները հաճախ շարունակվել են: 2008թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած բախումներին զոհ գնացած 10 անձանց մահվան առիթով իշխանությունները ոչ ոքի պատասխանատվության չեն ենթարկել:

Մաս 1. Հարգանք անձի ամբողջականության, այդ թվում՝

ա. Կյանքից կամայականորեն կամ անօրինականորեն զրկելը

Կառավարության կամ նրա գործակալների կողմից կամայական կամ անօրինական սպանությունների մասին, հաղորդումներ չեն եղել թեպետ ոչ մարտական պայմաններում բանակում գրանցված մահվան դեպքերը շարունակվել են խնդրահարույց մնալ:

Նման դեպքերից մեկի ժամանակ հունվարի 29-ին Պաշտպանության նախարարությունը հաղորդեց Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կադետի (կուրսանտի) մահվան մասին, ում ակադեմիայի

մարզահրապարակում կախված էին գտել: Դիահերձման արդյունքում նրա մարմնի վրա հայտնաբերվել էին բազմաթիվ վնասվածքներ: Հունվարի 30-ին պետական մարմինները ձերբակալեցին ակադեմիայի չորս կուրսանտներ Վաչե Սահակյանին, Մովսես Ազարյանին, Գնել Թևոսյանին և Նորիկ Սահակյանին՝ խմբակային սպանության մեղադրանքով: Ըստ լրատվամիջոցների հաղորդումների, վիճաբանությունից հետո կասկածյալները ծեծել էին զոհին և կախել՝ նրա մահը որպես ինքնասպանություն ներկայացնելու նպատակով: Ըստ հաղորդումների, վեց այլ կուրսանտներ ներկա էին եղել պատահարի ժամանակ, բայց վախեցել էին միջամտել: Մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը հայտարարեց, որ այս գործով կային շատ վկաներ, ում ահաբեկել էին, և ովքեր վախեցել էին խոսել: Չորսի դատաքննությունը սկսվեց հոկտեմբերի 22-ին:

Հունվարի 31-ին, Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրավիրած հրատապ հանդիպումից հետո իշխանություններն աշխատանքից ազատեցին ակադեմիայի տնօրենին, մի շարք փոխտնօրենների և բազմաթիվ այլ պաշտոնյաների: Փետրվարի 13-ին իշխանությունները ձերբակալեցին Արտյոմ Ավետիսյանին՝ ակադեմիայի մի կապիտանի՝ նրան առաջադրելով մեղադրանք՝ դեպքի հետ կապված միջոցներ չձեռնարկելու համար: Հոկտեմբերի 1-ի մամուլի հաղորդումները մատնանշում էին, որ իշխանությունները գործ էին հարուցել աշխատանքից ազատված փոխտնօրեններից մեկի՝ կասկածյալ Գնել Թևոսյանի հոր՝ Զարմիկ Մարկոսյանի դեմ՝ իր որդու համար արտոնյալ դիրք ստեղծելու համար:

Մարդու իրավունքների դիտորդները շարունակում էին պնդել, որ զինված ուժերում հաղորդված ահաբեկումների և մահվան միջադեպերի գերակշիռ մասի դեպքում իշխանությունները ներկայացնում են դեպքերի հոկված տարբերակները և հետագա քննությունը կենտրոնացնում այդ նախնական վարկածը հաստատելու վրա: Ըստ “Հելսինկյան Ասոցիացիա” հասարակական կազմակերպության (ՀԿ)՝ բոլոր ատյանների դատարանները քննիչների և դատախազների հետ միասին գործել են որպես մի համակարգ՝ զինված ուժերում գրանցված մահվան դեպքերի իրական մեղավորներին քողարկելու համար: Ըստ Հելսինկյան

ասոցիացիայի և այլ փորձագետների, դատարաններն անփոփոխ են թողել, իսկ դատախազները պաշտպանել են այն մեղադրականները, որոնք հիմնված են եղել այնպիսի քննությունների վրա, որոնց ընթացքում քննիչները և ռազմական ոստիկանությունը անօրինական կերպով կալանավորել են վկաներին և կասկածյալներին և ենթարկել են նրանց ֆիզիկական ու հոգեբանական ճնշումների՝ նրանց հարկադրելով կեղծ ցուցմունք տալ: Ըստ հաղորդումների քննիչները ոչնչացրել կամ փոխարինել են իրեղեն ապացույցներն ու մատնահետքերը: Մարդու իրավունքների բազմաթիվ մտահոգությունների վերաբերյալ մարտի 10-ին հրապարակած իր զեկույցում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսը նշում էր, որ իրեն «ապշեցրել է զոհերի ընտանիքների և քաղաքացիական հասարակության անվստահության բարձր մակարդակը՝ կապված նման քննությունների հետ»: Ըստ Մուժնիեկսի զեկույցի, ընդհանուր բողոքն այն է եղել, որ պաշտոնյաները զոհերին թույլ չեն տվել ծանոթանալ իրենց գործերի վերաբերյալ նյութերին և պատշաճ ուշադրություն չեն դարձրել նրանց վկայություններին:

Անջատողականները, Հայաստանի աջակցությամբ, շարունակել են վերահսկել Լեռնային Ղարաբաղի մեծ մասը և ադրբեջանական յոթ այլ տարածքներ: Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի խնդիրը շարունակում է մնալ միջազգային միջնորդական ջանքերի օրակարգում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում, որտեղ համանախագահում են Ռուսաստանը, Միացյալ Նահանգները և Ֆրանսիան: Գրանցվել է բռնությունների աճ շփման գծի երկայնքով և հայ-ադրբեջանական սահմանին: Տարվա ընթացքում ռազմական գործողությունները հանգեցրել 1994 թ.-ի զինադադարի ստորագրումից ի վեր մեկ տարվա կտրվածքով մահվան դեպքերի ամենաբարձր թվին, այդ թվում կան վեց հաստատված քաղաքացիական զոհեր:

Իշխանությունները որևէ մեկին պատասխանատվության չեն ենթարկել, ներառյալ հրամանատարության պատասխանատուներին, 2008թ. նախագահական ընտրություններին հաջորդած ցույցերի ժամանակ սպանված ութ քաղաքացիական անձանց և երկու ոստիկանների մահվան

համար: Նրանք նշել են, որ քննությունը շարունակվում է, բայց նոր տեղեկություններ չեն հաղորդել իրենց առաջխաղացման վերաբերյալ:

բ. Անհետացում

Քաղաքական շարժառիթներով պայմանավորված անհետացումների, մասին հաղորդումներ չեն եղել:

գ. Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Օրենսդրությունն արգելում է նման գործելակերպերը: Այնուհանդերձ, եղել են հաղորդումներ, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչները շարունակել են կանոնավոր կերպով մասնակից լինել իրենց հսկողության ներքո գտնվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումներին: Հունիսի 9-ին Ազգային ժողովն ընդունեց խոշտանգումների նոր սահմանումը քրեական օրենսգրքում՝ հստակեցնելով, որ կառավարության պաշտոնյաների որոշակի գործողությունները կարող են քրեորեն հետապնդվել որպես խոշտանգումներ: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն 2014թ. մարտի իր նիստում և դրան հաջորդած հաղորդումներում եզրակացրեց, որ երկիրը ազատազրկման բոլոր հաստատություններում դեռ չի հիմնել խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի մասին բողոքների ստացման և քննման անկախ համակարգ:

Ոստիկանության կողմից բռնությունները կասկածյալների նկատմամբ նրանց ձերբակալության, կալանավորման կամ հարցաքննության ընթացքում շարունակում են կարևոր խնդիր լինել: Ըստ մարդու իրավունքների ՀԿ-ների, զոհերի մեծ մասը չի հաղորդում չարաշահումների մասին՝ հաշվեհարդարից վախենալու պատճառով: Ըստ հաղորդումների՝ բռնությունների գերակշիռ մասը տեղի է ունեցել ոստիկանական բաժանմունքներում, որոնք ի տարբերություն բանտերի և ոստիկանության կալանքի հաստատությունների, հասարակական դիտորդների կողմից չեն մշտադիտարկվում: Մարտի 10-ի իր զեկույցում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս

Մուժնիեկսը մտահոգություն է հայտնել «ոստիկանության և այլ իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից խոշտանգումների և վատ վերաբերմունքի շարունակական հաղորդումների կապակցությամբ, հաճախ խոստովանություն կորզելու նկատառումներով և դրա հետ կապված անպատժելիության խնդրի» վերաբերյալ:

Հունվարի 27-ին Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) հրապարակեց մի զեկույց 2013թ. Հայաստան կատարած այցի վերաբերյալ: Այդ զեկույցի համաձայն ԽԿԿ պատվիրակությունը մեծ թվով հայտարարություններ է ստացել անազատության մեջ պահվող անձանցից, ովքեր ասել են, որ ոստիկաններն իրենց ենթարկել են ֆիզիկական կամ հոգեբանական ճնշումների կամ իրենց նկատմամբ անհամաչափ ուժ են կիրառել: Հաղորդվող ֆիզիկական վատ վերաբերմունքը ներառել էր հիմնականում բռունցքի և ոտքի հարվածներ և մահակներով ծեծ, ինչը տեղի էր ունեցել ձերբակալության կամ դրան հաջորդած հարցաքննության ընթացքում (մասնավորապես գործող ոստիկանների կողմից): Ազատազրկված անձիք նաև հայտնել են ԽԿԿ-ին, որ ոստիկանները կիրառել են ֆիզիկական ուժի սպառնալիք իրենց նկատմամբ և նախազգուշացրել ընտանիքի անդամներին հետևանքների մասին: ԽԿԿ-ի զեկույցում նշվում էր, մի շարք դեպքերում հաղորդված վատ վերաբերմունքն այնքան դաժան էր եղել (օրինակ՝ բավականին ծանր ծեծ, էլեկտրահարություն, շնչահեղձության նմանակում գազի դիմակով և հարվածներ ոտքերի ներբաններին), որ պետք է խոշտանգում համարվեր: Մի շարք դեպքերում ԽԿԿ-ի կողմից ազատազրկված անձանց բժշկական զննության կամ նրանց բժշկական գործերի ուսումնասիրության արդյունքները համահունչ են եղել ազատազրկված անձանց պնդումներին:
Ոստիկանության կալանավայրերի “Հասարակական դիտորդների խումբը” (ՀԴԽ), որը իրավասու մարմինների թույլտվությամբ կալանավայրերում բանտախուցերի ստուգում է իրականացրել, հունիսին հրապարակեց իր 2014 թվականի ամենամյա զեկույցը:
ՀԴԽ-ն պարզել էր, որ ոստիկանությունը շարունակել էր բռնության ենթարկել իր կողմից կալանավորված և ձերբակալված անձանց:

Վկայակոչելով ոստիկանական գրանցամատյանները՝ զեկույցում նշվում էր, որ Երևանում ոստիկանության կողմից ձերբակալված անձանց պահելու վայրեր փոխադրված անձանց շուրջ 39.4 տոկոսը 2014թ. առաջին ամիսներին ֆիզիկական վնասվածքներ էր ունեցել: Թեպետ ոստիկանությունը սովորաբար պնդել է, որ ձերբակալվածներն այդ վնասվածքները ստացել են նախքան իրավասու մարմինների կողմից կալանքի տակ հայտնվելը, ՀԴԽ-ն այդ պնդումները չի ընդունել: ՀԴԽ-ն նաև նշել էր, որ վնասվածքների թիվն աճել է այն բանից հետո, երբ բանտարկյալները փոխադրվել են ոստիկանական հաստատություններից դեպի դեպքի վայր կամ մասնակցել են հաստատություններից դուրս իրականացվող քննչական այլ գործողությունների:

Ապրիլի 17-ին Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) դադարեցրել է Վանաձոր քաղաքի բնակիչ Անի Բոշյանի նկատմամբ ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի դրսևորման մեղադրանքով հարուցված գործի քննությունը: Այդ վերաբերմունքը նրան 2014թ. դրդել էր ինքնասպանության փորձ կատարելու: Ըստ Հելսինկյան քաղաքացիական ասոցիացիայի Վանաձորի գրասենյակի (ՀՔԱՎ), որն իրավաբանական օգնություն էր ցուցաբերել Բոշյանին, նրա կողմից ինքնասպանության փորձը տեղի էր ունեցել մի քանի օր անց նրանից հետո, երբ ոստիկանությունը նրան տարել էր Վանաձոր քաղաքի Տարոնի ոստիկանական բաժանմունք 2014թ. նոյեմբերին՝ պոռնկագրական բնույթի պատկերներ տարածելու մեղադրանքով: Ըստ Բոշյանի, ոստիկանությունը նրան պահել էր ավելի քան 10 ժամ՝ ենթարկելով սպառնալիքների, հոգեբանական ճնշումների և արժանապատվությունը նվաստացնող և ստրացուցիչ վերաբերմունքի: Նրա պնդմամբ, իրեն ստիպել էին մերկանալ և լուսանկարել էին նրան: Նրանք նրա հորը պահել էին ոստիկանական բաժանմունքում որպես պատանդ՝ ստիպելու նրան խոստովանել, որ ինքը մեկ այլ կնոջ պոռնկագրական բնույթի պատկերները տեղադրել է սոցիալական մեդիայի ինտերնետային կայքում, մի վերաբերմունք, որն իբրև հանգեցրել էր նրա ինքնասպանության փորձ կատարելուն: ՀՔԾ-ն կարճել է գործը «հանցակազմի բացակայության» հիմքով: Քննիչներն ընդունել են ոստիկանների պնդումներն առ այն, որ ոչ մի բռնություն տեղի չի ունեցել

և Բոշյանի և նրա հոր գործողությունները ոստիկանական բաժանմունքում ունեցել են կամավոր բնույթ: Ըստ Բոշյանի, ոստիկանությունը նաև պահանջել էր 5 000 ԱՄՆ դոլար կաշառք՝ իր վրայից մեղադրանքները հանելու համար: ՀՔԱՎ-ն ՀՔԾ-ի որոշումը բողոքարկել էր դատարանում, սակայն առաջին ատյանի դատավոր Արթուր Մկրտչյանը մերժել էր բողոքը: Դեկտեմբեր ամսվա դրությամբ Բոշյանի՝ պոռնկագրություն տարածելու մեղադրանքով դատաքննությունն ընթացքի մեջ էր:

Ըստ ՀԴԽ-ի, ոստիկանությունը ձերբակալությունն ինքնին կիրառել է որպես պատժամիջոց: Պաշտոնական տեղեկությունների համաձայն, տարվա առաջին 10 ամիսների ընթացքում ոստիկանությունն ազատ է արձակել ձերբակալված անձանց գրեթե 50 տոկոսին՝ առանց նրանց նկատմամբ մեղադրանք առաջադրելու: Ըստ ՀԴԽ –ի, որոշ շրջաններում առանց մեղադրանքի առաջադրման ազատ արձակվածների համամասնությունը գերազանցել է 90 տոկոսը:

Զինվորական ծառայության վատ կենցաղային պայմանները, կոռուպցիան և հրամանատարների հաշվետվողականության բացակայությունը շարունակել են նպաստել զինվորների նկատմամբ վատ վերաբերմունքին և ծառայակիցների կամ վերադասների կողմից նրանց վնասվածքներ հասցնելուն, չնայած որ արժանահավատ վիճակագրություն չի եղել չարաշահումների ծավալների վերաբերյալ: Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների “քրեական արժեհամակարգի” վրա հիմնված ենթամշակույթը սպառնալիք է զիվորական կարգապահությանն ու հանգեցրել է «տղամարդկային վարքագիծ» հասկացությանը, որը խաթարել է օրենքով սահմանված կանոնները: Ըստ Պաշտպանության նախարարության այս ենթամշակույթը ստիպել է զինվորներին չհաղորդել հանցավոր վարքի և չարաշահումների մասին: Չնայած որ զինվորական ղեկավարությունը ընդունել է խնդիրն ու փորձել միջոցներ ձեռնարկել այն հաղթահարելու ուղղությամբ, մի շարք դիտորդների կարծիքով զինվորական որոշակի ստորաբաժանումների հրամանատարները դա, ինչպես նաև ընդհանրապես զորակոչիկների նկատմամբ բռնության կիրառումը համարում են կարգապահություն պահպանելու արդյունավետ միջոց:

Զինվորների ընտանիքները հայտնել են, որ զորամասերը վերահսկում են կոռումպացված պաշտոնյաները, իսկ իրավապաշտպան դիտորդները և Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակը հաղորդել է, որ իշխանությունները շարունակում են բանակ զորակոչել առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձանց, ովքեր պետք է համարվեին զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

Համաձայն Հելսինկյան ասոցիացիայի կոմիտեի տեղական ՀԿ-ի տարեկան զեկույցի ռազմական ոստիկանությունը, որը չի ենթարկվում որևէ արտաքին մշտադիտարկման, իր կալանքի ներքո գտնվող զինվորներին ենթարկել է ֆիզիկական և այլ բռնությունների: Հունվարին հրապարակված զեկույցը կազմված էր նախկինում ռազմական ոստիկանության կողմից կալանքի վերցված, սակայն այնուհետև տարբեր քաղաքացիական քրեակատարողական հիմնարկներ փոխադրված զինվորական անձնակազմի 38 անդամների հետ հարցազրույցների հիման վրա: Շատերը, ովքեր պատրաստ էին խոսել (օրինակ այն անձինք, ովքեր չէին սպասում դատավարության և չէին վախենում քննադատել ռազմական ոստիկանությանը) հաղորդել էին, որ իրենց նկատմամբ վատ վերաբերմունքը ներառել է ծեծ, ոտքի և բռունցքի հարվածներ, ռետինե մահակներով հարվածներ և ստորացում: Ըստ Հելսինկյան ասոցիացիայի կոմիտեի, ռազմական ոստիկանությունը նախքան ոստիկանական կալանքի հաստատություններ փոխադրելը մինչև չորս օր՝ կալանքի տակ է պահել շատ անհատների: ՝ :

Պաշտպանության նախարարության ջանքերն ուղղված զինված ուժերում կարգապահության բարելավմանը ներառել են ավելի շատ քաղաքացիական իրավական համակարգի, քան վարչական կարգապահության կիրառումը՝ զինվորական օրենքների և կանոնակարգերի կիրարկման նպատակով, մարդու իրավունքների վերաբերյալ ուսուցումը սպաների համար և տղաներին զինվորական ծառայության համար սոցիալ-հոգեբանական ու իրավական պատրաստվածության տրամադրումը: Նոյեմբերին Պաշտպանության նախարարությունը հայտարարեց Մարդու իրավունքների և բարեվարքության ամրապնդման կենտրոնի ստեղծման մասին, որի

հանձնագիրը ներառում է մարդու իրավունքների պաշտպանությունը, բարեվարքության ամրապնդումը, էթիկայի կանոնների խթանումը, հակա-կոռուպցիոն քաղաքականության իրականացումը և կառավարման ոլորտի փոփոխությունների իրականացումը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համակարգումը։

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Անբավարար սանիտարահիգիենիկ պայմանները, անբավարար բուժօգնությունը, կոռուպցիան և գերբնակեցվածությունը որոշ հաստատություններում շարունակել են խնդրահարույց մնալ, իսկ որոշ դեպքերում պայմանները եղել են խիստ ծանր ու կյանքի համար վտանգավոր։ Բանտերում, ընդհանուր առմամբ, բացակայել են հաշմանդամություն ունեցող բանտարկյալների համար հարմարությունները։

<u>Ֆիզիկական պայմաններ.</u> 2014թ. իր զեկույցում Հասարակական դիտորդական խումբը (ՀԴԽ) նկարագրել է գերբնակեցվածության շարունակական խնդիրը որպես որոշ բանտերի ներառյալ ամենամեծի՝ Նուբարաշեն քրեկատարողական հիմնարկի ամենակարևոր խնդիրը։

Պաշտոնական տվյալների համաձայն, 24 բանտարկյալ է մահացել տարվա առաջին 10 ամիսների ընթացքում, որոնցից 23-ը՝ բնական պատճառներից, իսկ մեկը՝ պատահական էլեկտրահարումից։ Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների մահացության ցուցանիշին նպաստել են քրեակատարողական հաստատությունների գերբնակեցվածությունը, շենքային վատ պայմանները և անփութությունը բանտարկյալների բուժօգնության հարցում: Իրավապաշտպան դիտորդները նշել են նաև, որ նշված մահվան դեպքերով պատշաճ քննություն չի իրականացվել:

Աբովյանի քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ի զեկույցի համաձայն, հաստատությունը չի բավարարել կին բանտարկյալների գենդերային հատուկ կարիքները, ինչպիսիք են պատշաճ բժշկական խնամքը,

սանիտարահիգնեիկ պայմանները, սնուցումը և հոգեբանական ծառայությունները: Բանտարկյալներն ապավինել էին անձնական միջոցներին՝ հեռուստացույց, սառնարան և կահույք ձեռք բերելու, ինչպես նաև իրենց տարածքը նորոգելուն և ջեռուցելուն, ինչը հանգեցրել էր անհավասար պայմանների: Գրեթե բոլոր բանտարկյալները ապավինել են բանտից դուրս ուտելիքի, դեղամիջոցների և սանիտարահիգենիկ պարագաների ձեռք բերմանը, քանի որ բանտի սննդի որակը ցածր է եղել, դեղամիջոցները ներառել են, միայն սովորական ցավազրկողներ, իսկ սանիտարահիգենիկ պարագաները օգտագործման ենթակա չեն եղել: Այլ խնդիրների թվում են եղել ոչ բավարար թվով զուգարաններն ու ցնցուղները, հոսող ջրի սահմանափակ մուտքը, անբավարար ջեռուցումը ձմռանը, անբավարար օդափոխությունը, բժշկական ծառայությունների անհասանելիությունը, ֆիզիկական վարժությունների հարմարությունների բացակայությունը և աշխատանքի սահմանափակ հնարավորությունները: Զեկույցում բանտարկյալների նկատմամբ բռնության և նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ որևէ վկայություն չկա, թեև դրանում նկարագրված բանտի պայմաններին վերաբերող մանրամասները կարող են անմարդկային վերաբերմունքի դրսևորումներ դիտվել:
Ըստ դիտորդների, մյուս բանտերի մեծ մասն ուներ նմանօրինակ խնդիրներ կապված ուտելիքի, սանիտարահիգենիկ պայմանների, օդափոխության և բժշկական օգնության հետ: ՀԴԽ-ն նշել էր, որ բանտային բժշկական անձնակազմը չունի անկախություն և պետք է համաձայնություն ստանա վարչակազմից՝ բանտարկյալին հիվանդանոց տեղափոխելու, ֆիզիկական վնասվածքները բանտարկյալի գործում արձանագրելու կամ նմանօրինակ գործողություններ իրականացնելու համար

2014թ. դեկտեմբերի իր զեկույցում ՀԴԽ-ն նկարագրում էր շարունակական խնդիրներ կապված բանտարյալների նկատմամբ վերաբերմունքի, բանտարկյալների միջև փոխադարձ հարաբերությունների և լայնորեն տարածված կոռուպցիայի հետ: Ֆիզիկական բռնություններն ու նվաստացնող վերաբերմունքը քրեակատարողական հիմնարկներում ընդունված երևույթ են, իսկ մենախցերի կիրառումն ու մահակներով ծեծն ամենաընդունված

պատժամիջոցները: Երբ նման դեպքերը հայտնի էին դառնում, բանտարկյալները սովորաբար փորձում էին թաքցնել չարաշահողներին կամ ժխտել, որ նման միջադեպ է տեղի ունեցել: Ըստ ՀԴԽ-ի զեկույցի, համասեռամոլ տղամարդիկ, անձինք, ովքեր կապված էին համասեռամոլ տղամարդկանց հետ և բանտարկյալները, ովքեր դատապարտված են եղել այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են բռնաբարությունը, առանձնացվել են մյուս բանտարկյալներից՝ նրանց հարկադրելով կատարել ամենանվաստացուցիչ աշխատանքներ և սեռական ծառայություններ մատուցել:

Վարչարարություն. Տեղեկություններ չեն տրամադրվել քրեակատարողական հիմնարկների իշխանությունների գործավարության համարժեքության վերաբերյալ, չնայած որ ՀԴԽ-ի 2014թ. զեկույցում նշվել է, որ քանի որ բանտարկյալները սովորաբար չեն հաղորդում չարաշահումների մասին, դրանք չեն կարող պատշաճ կերպով արձանագրվել: Չեն եղել հաղորդումներ բռնություններ թույլ չտված հանցագործների նկատմամբ այլընտրանքային պատիժների կիրառմանն ուղղված քայլերի մասին, չնայած որ թույլատրվել է պատիժը կրելուց վաղաժամկետ, պայմանական կամ ժամանակ առ ժամանակ համաներմամբ ազատումը: Պատժից վաղաժամկետ ազատման ծրագիրը շարունակել է մտահոգության առարկա լինել: Իրավապաշտպան ակտիվիստները և փաստաբանները շարունակել են մտահոգություն հայտնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ու պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով հանձնաժողովների գործունեության վերաբերյալ: Պատժից վաղաժամկետ ազատման չափանիշների բացակայությունը, բողոքարկման մեխանիզմի բացակայությունը և հանձնաժողովների կազմում իրավապահ կառույցների ներկայացուցիչների ներկայացվածության բարձր աստիճանը շարունակել են հանդիսանալ պատշաճ գործընթացի խոչընդոտներ:

ՀԴԽ-ն հաղորդել է, որ վաղաժամկետ ազատ արձակման հանձնաժողովին ներկայացվող դիմումների թիվը տարեցտարի ավելանում է, մինչդեռ նվազում է դրանց տրվող դրական պատասխանների թիվը: Հելսինկյան ասոցիացիայի կոմիտեի կարծիքով

քրեակատարողական հիմնարկների վարչարարությունը և վաղաժամկետ արձակման հարցերով հանձնաժողովները, չնայած հիմնարկների գերբնակեցվածությանը, ձգտում են պահպանել բանտարկյալների մեծ թիվ՝ պետական բյուջեից ավելի շատ ֆինանսավորում ստանալու և բանտարկյալների ավելի մեծ խմբից կաշառք կորզելու հնարավորություն ունենալու նպատակով: Վաղաժամկետ ազատումն ավելի մատչելի է եղել այն բանտարկյալների համար, ովքեր անձնական կապեր են ունեցել կառավարության հետ: Օրինակ, 2014թ. լրատվամիջոցների հաղորդումների համաձայն Վրաստանում Հայաստանի դեսպանի որդին դատապարտվել է չորս ու կես տարվա բանտարկության թմրանյութերի մաքսանենգության համար, սակայն վաղաժամկետ ազատ է արձակվել պատիժը կրելուց մոտավորապես մեկ տարի և երկու ամիս անց:

ՀՄԽ-ը շարունակել է Արդարադատության նախարարությանը զեկույցներ ներկայացնել դատապարտյալների մասին, որոնց վատթարացող առողջական վիճակը, ըստ իր գնահատման, բավարարում էր վաղաժամկետ ազատ արձակվելու պահանջները: Առողջական վիճակի հիմքով բանտարկյալների վաղաժամկետ ազատ արձակման համար պատասխանատու միջգերատեսչական բժշկական հանձնաժողովն ընդհանուր առմամբ շատ դանդաղ է գործել և չի ունեցել սահմանված ընթացակարգեր:

Իրավապաշտպան կազմակերպությունները և օմբուդսմենը շարունակել են մտահոգություն հայտնել առ այն, որ դատապարտյալներն ու կալանավորները միշտ չէ որ ապահովվում են տեսակցության ողջամիտ հնարավորություններով՝ այցելությունների համար համապատասխան վայր չլինելու պատճառով:

Բանտերն օմբուդսմեն չեն ունեցել, իսկ բանտարկյալների համար իրենց բանտարկությանն առնչվող խնդիրների մասին հաղորդելու արդյունավետ մեխանիզմներ չեն եղել: Իրավասու մարմինները միշտ չէ, որ թույլ են տվել բանտարկյալներին և կալանավորներին իշխանություններին ներկայացնել անմարդկային պայմանների մասին արժանահավատ բողոքներ առանց գրաքննության: Ըստ ՀԴԽ-ի,

կառավարության տարբեր մարմիններին ուղղված բանտարկյալների գրավոր բողոքներն ու դիմումները ծրարվել են բանտի անձնակազմի կողմից, մի գործելակերպ, որը բանտարկյալներին նրանց բողոքների գաղտնիության երաշխիք չի տրամադրել:

Անկախ մշտադիտարկում. Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ թույլատրել են տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում ԽԿԿ-ին իրականացնել բանտերի և կալանավայրերի պայմանների մշտադիտարկում, և նրանք կանոնավոր կերպով իրականացրել են դա: Նրանք կարող էին առանձնազրույցներ ունենալ բանտարկյալների հետ: Իրավասու մարմինները թույլատրել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեին այցելել բանտեր և նախնական կալանքի կենտրոններ:

Բարելավումներ. Արմավիրի նորակառույց քրեակատարողական նորաբաց հիմնարկն առաջարկել է ավելի լավ պայմաններ և առավել լավ վերապատրաստված բանտային անձնակազմ՝ նախորդ հիմնարկի համեմատությամբ: Տարվա ընթացքում բանտի պաշտոնյաները ենթակառուցվածքային որոշ կատարելագործումներ են իրականացրել, այդ թվում՝ տեղադրել են օդափոխիչ համակար և հանել են ապակե միջնապատերը օդափոխության մի շարք խցիկներից:

դ. Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Օրենքն արգելում է կամայական ձերբակալումը և կալանավորումը: Չնայած որ իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են կալանքի վերաբերյալ դատական որոշում ստանալու օրենքի պահանջին, սակայն դատավորները հաճախ չեն կամեցել վիճարկել անձանց կալանավորելու մասին դատախազների միջնորդությունները կամ քննել ձերբակալությունների ժամանակ ոստիկանների պահվածքը: Ոստիկանությունը կամայականորեն կալանավորել է քաղաքացիների, այդ թվում՝ ցույցերի մասնակիցների:

Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության, իսկ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ)՝ ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար։ ՀՔԾ-ն առանձին գործակալություն է, որը մասնագիտացված է այն գործերի նախնական քննությամբ, որոնք ներառում են կասկածելի չարաշահումներ պետական պաշտոնյաների կողմից։ 2014թ. հիմնադրված ՀՀՔԿ-ն, պատասխանատու է քրեական գործերի մինչդատական քննության իրականացման համար և ներառում է նախկինում ոստիկանության և Պաշտպանության նախարարության ներքո գործող քննչական ծառայությունները։ Այս բոլոր մարմինների ղեկավարներին նշանակում է Նախագահը։

Խնդրահարույց էր անպատժելիությունը. չկար ոստիկանության չարաշահումները քննելու առանձնացված անկախ մեխանիզմ։ Չնայած ոստիկանության կողմից իրավախախտումների բազմաթիվ ՀՔԾ քննությունների իրականացմանը, նման քննությունները հազվադեպ էին ավարտվում դատապարտմամբ, և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարն ու ԽԿԿ-ն քննադատում էին ոստիկանների հաճախակի ներգրավվումը ոստիկանների կողմից իրավախախտումների դեպքերի առնչությամբ ապացույցների ձեռքբերման գործընթացներին։

Քաղաքացիները կարող էին ոստիկանության դեմ դատական հայց ներկայացնել, սակայն այս միջոցը սահմանափակ էր։ Նախքան դատը մեղադրյալներն օրինական իրավունք ունեն բողոք ներկայացնել քրեական գործի քննության ընթացքում իրավապահների կողմից իրենց հանդեպ թույլ տված բռնությունների վերաբերյալ, բայց պետք է ոստիկանությունից կամ դատախազությունից դատաբժշկական փորձաքննության թույլտվություն ստանան, որն անհրաժեշտ է ֆիզիկական բռնության մեղադրանքն օրինականորեն հաստատելու համար։ Իրավապաշտպան կազմակերպությունները շարունակել են հայտնել, որ իրավասու մարմինները հազվադեպ են այդպիսի թույլտվություն տվել կամ ձգձգել են այնքան, երբ բռնության հետքերն այլևս տեսանելի չեն եղել։

ՀԿ-ների հաղորդմամբ դատավորները սովորաբար անտեսել են մեղադրյալների այն պնդումները, թե ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնությունների միջոցով: Մարտի 10-ի իր զեկույցում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը լուրջ մտահոգություն է հայտնել դատարանի կողմից այն վկայությունների վրա հիմնվելը, որոնք ըստ ամբաստանյալների պնդումների ձեռք են բերվել ճնշման ներքո, հատկապես երբ նման վկայությունները հիմք են հանդիսանում դատապարտման համար: Ապրիլի 6-ին Ազգային ժողովում իր ելույթի ժամանակ Գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը նկարագրեց ամբաստանյալների «ակնհայտորեն մտացածին» պնդումները որպես դատավարությունների ձգձգման պատճառ: Գլխավոր դատախազն առաջարկեց, որպեսզի քննիչները նախազգուշացնեն ամբաստանյալներին սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Խնդրահարույց էին կոռուպցիան, օրենքի ընտրովի կիրառումն ու անպատժելիությունը ազդեցիկ պաշտոնյաների և նրանց ազգականների առնչությամբ: Շատ դեպքերում իրավապահները հրաժարվել էին դատական կարգով հետապնդում իրականացնել մեծ հնչեղություն ունեցող գործերով, որոնցով անցնում էին իշխանությունների հետ կապ ունեցող անձինք, կամ էլ շատ մեղմ էին եղել մեղավորների նկատմամբ: (տես մաս 1.գ.):

Մի շարք դեպքերում կարծես թե արտաքին ճնշումներ են գործադրվել զոհերի կամ վկաների վրա՝ հրաժարվելու իրավասու մարմինների կողմից իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի պաշտոնական ցուցմունքներից: Օրինակ մայիսի 2-ին լրատվամիջոցները հաղորդել են, որ Տիգրան Խաչատրյանը՝ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի որդին, և նրա ընկերների մի խումբ ծեծի են ենթարկել Հարություն և Մուշեղ Զաքարյաններին փողոցային մի վիճաբանությունից հետո: Եղբայրները տուժել էին բազմաթիվ վնասվածքներից, իսկ Հարություն Զաքարյանը ստացել էր անդառնալի վնաս՝ կորցնելով տեսողությունը: Չնայած որ նրանք բազմաթիվ հարցազրույցներ էին տվել մամուլին ծեծկռտուքի ընթացքում Տիգրան Խաչատրյանի դերի վերաբերյալ, Զաքարյանների ընտանիքն ի վերջո փոխել էր իր ցուցմունքները, և

Հարություն Զաքարյանը պնդել էր, թե ինքը հստակ չի հիշում, թե կոնկրետ ո՞վ է հարված հասցրել իր աչքերին: Հոկտեմբերի 10-ին իրավասու մարմիններն ազատ են արձակել Տիգրան Խաչատրյանին՝ ՀՀՔԿ-ի ներկայացրած բողոքից հետո, չնայած որ նրա հանցակիցները մնում էին կալանքի տակ: Գործի քննությունն ավարտվել էր հոկտեմբերի 30-ին՝ առանց Տիգրան Խաչատրյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքի:

Իրավապահ մարմինները դեռևս չունեն չարաշահումների կանխարգելման համար անհրաժեշտ քաղաքական կամք, պատրաստվածություն, միջոցներ և ընթացակարգեր:

Ձերբակալման ընթացակարգեր և կալանավորների նկատմամբ վարվելակերպ

Չնայած օրենքով պահանջվում է կարգադրագիր և ողջամիտ կասկած ձերբակալություն իրականացնելու համար, իրավասու մարմինները ժամանակ առ ժամանակ քրեական հանցանքների մեջ կասկածվողներին ձերբակալել են առանց կարգադրագրի կամ առանց ողջամիտ կասկածի: Օրենսդրության համաձայն քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ պաշտոնապես ձերբակալել այդ անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Դատավորները հազվադեպ են մերժել կալանքի կարգադրագիր ստանալու վերաբերյալ ոստիկանության հայտերը: Ըստ ՀԴԽ-ի զեկույցի, ոստիկանությունը չի պահել ճգրիտ հաշվառում և կամ էլ հետին թվով է հաշվառել կալանավորման և ձերբակալման արձանագրությունները կամ ընդհանրապես չի լրացրել դրանք:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց նրանց կալանավորման կամ ձերբակալման պատճառների, ինչպես նաև լռություն պահպանելու և հեռախոսազանգ կատարելու իրավունքների մասին: Գրավը իրավական տարբերակ էր,

բայց դատավորները չէին ցանկանում այն կիրառել: Ամբաստանյալներն ունեին ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու իրավունք: Անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձն օրենքով իրավասու է ունենալ հանրային պաշտպան: Ըստ ՀԴԽ-ի, փաստաբանի միջոցով ներկայացված լինելու իրենց իրավունքի մասին իմացել է կալանքի վերցված անձանց փոքրաթիվ մասը միայն: 2014թ. ՀԴԽ-ի զեկույցում նշվում էր, որ ձերբակալվածների 15 տոկոսից ավելի քիչն է օգտվել փաստաբանի ծառայություններից: Համաձայն ՀՔԱՎ-ի մի զեկույցի, երբ մարդիկ փաստաբան են ներգրավել իրավապահ անձնակազմի հետ հենց առաջին շփման ժամանակ, նրանց իրավունքներն ավելի քիչ են խախտվել: Դիտորդները նշել են, որ ոստիկանությունը հաճախ է խուսափել անհատներին տրամադրել նրանց պատշաճ ընթացակարգային իրավունքները՝ ոչ թե նրանց ծանուցելով և պահելով, այլ պաշտոնապես ձերբակալելով, այն ենթատեքստով, թե նրանք ավելի շատ գործով անցնող վկաներ են, այլ ոչ կասկածյալներ: Այս գործելակերպը ոստիկաններին թույլ է տվել հարցաքննել անձանց առանց դատապաշտպանի ծառայություններից օգտվելու հնարավորության իրավունքի:

Օրենքը պաշտպանյալներին իրավունք է տալիս դրամական փոխհատուցում պահանջել արդարադատական սխալի կամ իրավապահ մարմինների կողմից ապօրինի գործողությունների հետևանքով նրանց հասցված ոչ նյութական վնասի համար: Ամբաստանյալների այս հնարավորություններից օգտվելու հնարավորության մասին ոչ մի զեկույց չի եղել:

<u>Կամայական ձերբակալում.</u> Համաձայն միջազգային կազմակերպությունների և մարդու իրավունքների դիտորդների հաղորդումների, ոստիկանությունը, ԱԱԾ անձնակազմը և սահմանապահները արգելանքի տակ են վերցրել կամ ձերբակալել են մարդկանց՝ առանց ձերբակալության կարգադրագրի: Մարդու իրավունքների կազմակերպությունները պնդել են, որ նման ձերբակալությունները հաճախ եղել են ոչ թե ոստիկանական հետաքննության արդյունք, այլ հանդիսացել են հետաքննություն սկսելու

ուղի, երբ իշխանությունները հույս են ունեցել, որ կասկածյալը կարող է խոստովանել և այդպիսով ավելորդ դարձնել հետագա քննությունը:

Նախնական կալանք. Նախնական կամ որպես խափանման միջոց կիրառվող կալանքի երկար տևողությունը մնայուն խնդիր է: Պաշտոնական վիճակագրության համաձայն տարվա առաջին 10 ամիսների ընթացքում բանտային բնակչության միջին հաշվով 8 տոկոսը կազմված է եղել նախնական կալանքի տակ գտնվողներից, և լրացուցիչ 19 տոկոս են կազմել այն կալանավորները, որոնց դատաքննությունն ընթացքի մեջ է եղել կամ ովքեր սպասելիս են եղել իրենց դատավճիռների ուժի մեջ մտնելուն: Որոշ դիտորդների չափազանց երկար նախնական կալանքի կիրառումը նպատակ է ունեցել հետաքննող մարմինների կողմից ամբաստանյալներից խոստովանություն կամ ինքնամեղադրական ցուցմունքներ կորզել:

Օրինակ նոյեմբերի 9-ին, այն բանից հետո, երբ Հրաչյա Գևորգյանն արդեն չորս տարի էր անցկացրել նախնական կալանքի տակ, քանի որ դատարանը նրան դատապարտել էր ութ տարվա ազատազրկման՝ պատանդ վերցնելու, դրամաշորթության և իրավապահ մարմինների նկատմամբ բռնությունների գործադրման համար: Ըստ Հելսինկյան ասոցիացիա ՀԿ-ի (որը դիտարկել էր գործն ու նրան աջակցություն ցուցաբերել իր կալանքի ընթացքում) Գևորգյանի ֆիզիկական և հոգեկան առողջությունն այնքան էր վատթարացել նախնական կալանքի տակ նրա գտնվելու այդ չորս տարիների ընթացքում, որ նա գրեթե չէր կարողանում խոսել և ստված նրան պահում էին բանտի հիվանդանոցում:

Օրենքը և նախադեպային իրավունքը նախատեսում են գրավ բոլոր քրեական գործերով, բայց դատավորները հազվադեպ են դա նկատի առնում: Մարտի 10-ի իր զեկույցում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը նշել է Դատավորների միության կողմից կատարված մի պնդում, թե դատավորները չեն ցանկանում կիրառել նախնական կալանքից տարբեր մինչդատական այլ միջոցներ, քանի որ դատախազները հաճախ առարկում են, իսկ վերաքննիչ դատարանը սովորաբար բեկանում է առաջին ատյանի դատավորի վճիռը:

Սակայն, դատական անկախության մի հազվագյուտ դրսևորմամբ առաջին ատյանի դատավոր Դավիթ Հարությունյանը, չորս տարբեր առիթներով՝ գրավի դիմաց, որպես նախնական կալանքի այլընտրանք, 2014 թ. հուլիս-ապրիլ ամիսներին ազատ է արձակել մի ոչ բռնի ամբաստանյալի: Ամեն անգամ դատավորը մանրամասնում էր, որ կառավարությունը չի կարողացել ի ցույց դնել ապացույցներ, թե ամբաստանյալը կարող է փախուստի դիմել, կարող է վտանգ ներկայացնել հասարակության համար կամ կարող է կաշառել վկաներին կամ խեղաթյուրել ապացույցները: Յուրաքանչյուր որոշումից հետո քննիչները կամ դատախազները այն բողոքարկում էին վերաքննիչ դատարանում, որը բեկանում էր այն: Յուրաքանչյուր բեկանումից հետո դատավոր Հարությունյանը շարունակում էր հիմնավորել գրավի վերաբերյալ իր որոշումը՝ վկայակոչելով Վերաքննիչ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպերը: Չորրորդ վերաքննիչ բողոքի ներկայացման ժամանակ վերաքննիչ դատարանն ուժի մեջ թողեց գրավի թույլտվություն տալու վերաբերյալ դատավոր Հարությունյանի որոշումը:

Կալանքը չափից ավելի է կիրառվել նաև անչափահաս իրավախախտների նկատմամբ: 2013թ. Երեխայի իրավունքների կոմիտեն հաղորդել է , որ Հայաստանը չունի անչափահասների արդարադատության ամբողջական համակարգ, որը կներառեր անչափահասների համար դատարաններ և անչափահասների արդարադատության համապարփակ օրենքներ՝ պաշտոնական արդարադատական համակարգին արդյունավետ այլընտրանքներով: Կառավարությունը նաև չի տրամադրել կանխարգելիչ կամ վերականգողական ծառայություններ անչափահաս իրավախախտների համար: Իշխանությունները մինչդատական հետաքննության ընթացքում տևական կալանքներ են կիրառել անչափահաս իրավախախտների նկատմամբ, և հնարավոր է նաև որպես պատժամիջոց նախնական կալանքի ընթացքում ենթադրյալ իրավախախտումների համար հինգից տաս օր առանձնացրել մենախցերում: Ըստ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի, անչափահասները հատկապես խոցելի էին քրեական արդարադատության համակարգում և պաշտպանված չէին իրենց իրավունքների ոտնահարումներից:

Թեպետ օրենքը դատախազներից պահանջում է լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիսը մեկ երկարաձգելու համար, դատավորները հաճախ երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով: Իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, ըստ որի նախնական կալանքը չպետք է գերազանցի 12 ամիսը, բայց այն բանից հետո, երբ դատախազներն իրենց գործերն ուղարկում են դատարան դատաքննության նպատակով, օրենքը չի տրամադրում հետագա կալանքի ժամանակային սահմանափակումներ այլ միայն նշում է, որ դատաքննությունը պետք է ունենա «ողջամիտ տևողություն»: Դատախազները հաճախակի դիմում են դատավորներին դատաքննությանը պատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ ունենալու նպատակով դատը հետաձգելու, այսինքն՝ քննությունների տևողության ավելացնելու միջնորդությամբ: Դատախազները դատական լսումները հետաձգելու համար պատասխանատվությունը դնում են դատապաշտպանների և պաշպանությանը նախապատրաստվելու համար վերջիններին լրացուցիչ ժամանակ տրամադրելու միջնորդությունների վրա: Գերծանրաբեռնված դատական գործերի մատյանները դատական բոլոր ատյաններում նույնպես նպաստել են երկարատև դատավարություններին:

ե. Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, գործնականում դատական համակարգն անկախություն չի դրսևորել, թեև վարչական դատարանները համեմատաբար ավելի անկախ են եղել քան մյուս դատարանները: Եղել են հաղորդումներ այն մասին, որ Վճռաբեկ դատարանը բոլոր կարևոր գործերի արդյունքները թելադրել է ցածր ատյանի դատարանների դատավորներին: Դիտորդների կարծիքով, Վճռաբեկ դատարանի վերահսկողությունը դատական որոշումների նկատմամբ շարունակում է լինել համապարփակ խնդիր՝ ազդելով դատական անկախության վրա:

Դատավորները շարունակում են ենթարկվել քաղաքական ճնշումների գործադիր իշխանության յուրաքանչյուր մակարդակից, այդ թվում իրավապահ գործակալությունների, ինչպես նաև դատական հիերարխիայի կողմից: Չունենալով պաշտոնավարման տևողություն՝ նրանք խոցելի են եղել նախագահի կողմից պաշտոնանկ արվելու առումով և չեն ունեցել արդյունավետ պաշտպանության իրավական միջոցներ, երբ գործադիր, օրենսդիր կամ ավելի դատական իշխանությունները որոշել են պատժել նրանց:

Մարտի 10-ի զեկույցում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը արտացոլելով մարդու իրավունքների դիտորդների մտահոգությունները նշել է, որ կարգապահական վարույթներն անարդարացիորեն են կիրառվել դատավորների նկատմամբ՝ նրանց որոշումների վրա ազդելու կամ նրանց հաշվեհարդարի ենթարկելու նպատակով: Նա նաև նշել է, որ արդարադատության նախարարի ներգրավվումը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում դատական անկախությանն անհարիր մի գործելակերպ է:

Իշխանությունները որպես կանոն կատարել են դատական վճիռները:

Դատավարությունները սովորաբար բավարարել են արդար դատաքննության ընթացակարգային չափանիշներից շատերը: Սակայն դրանք հաճախ եղել են անարդար ըստ էության, քանի որ շատ դատավորներ հարկադրված են զգացել աշխատել դատախազների հետ՝ դատապարտման հասնելու նպատակով:

Մարտի 31-ին ՄԻԵԴ-ը գտավ, որ խախտվել են ազատ դատաքննության և խոշտանգումների կանխարգելման իրավունքները *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով և կարգադրեց պետությանը վճարել ընդհանուր 62,100 եվրո ($68,300) գումար դիմումատուներին: Դիմումատուները՝ ամուսին և կին՝ Բագրատ և Նարինե Նալբանդյանները և նրանց դուստր Արևիկը, հայտարարություն էին ներկայացրել խոշտանգումների և վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ Վարդենիսի ոստիկանական բաժանմունքում, որը կասկածներ էր ունեցել, թե Նալբանդյանները 2004թ-ին սպանել են Արևիկ Նալբանդյանի

դասարանցիներից մեկին : Բագրատ Նալբանդյանը պնդել էր, որ ոստիկանությունը ձերբակալել և ծեծի է ենթարկել իրեն՝ ստիպելու խոստովանել, որ կատարել է զոհի սպանությունը: Նրա կինը պնդել էր, որ երբ ինքը մերժել էր ցուցմունք տալ իր ամուսնու դեմ, ոստիկանությունը ծեծի էր ենթարկել իրեն՝ մահակներով խփելով իր ներբաններին և սպառնացել էր բռնաբարել իրենց անչափահաս աղջկան, ով նույնպես կալանքի տակ էր եղել: Արդյունքում Նարինե Նալբանդյանը խոստովանել է, որ ինքն է սպանել, իսկ նրա ամուսինը խոստովանել է, որ օգնել է նրան: Նախագահող դատավորը դատավարության ընթացքում հաշվի չի առել երկու ամբաստանյալների պնդումները, թե իրենք խոստովանել են ճնշման տակ, և Նալբանդյաններին համապատասխանաբար դատապարտել է իննից տասնչորս տարվա բանտարկության: Դատավարության ընթացքում դատավորի թողտվությամբ խառնաշփոթ մթնոլորտ է ստեղծվել, որի արդյունքում հնչել են սպառնալիքներ, բանավոր հայհոյանքներ և տեղի են ունեցել ֆիզիկական հարձակումներ ամբաստանյալների, նրանց փաստաբանների և ընտանիքի անդամների նկատմամբ: ՄԻԵԴ-ը նշել է, որ այս վարքագիծը շարունակվել է նաև վերաքննիչ դատարանում և վճռել, որ թե՛ նախագահող առաջին ատյանի դատավորը և թե՛ վերաքննիչ դատարանը ոտնահարել են պաշտպանյալների արդար դատաքննության իրավունքը: Փետրվարի 7-ին նախագահը նախագահող դատավոր Դավիթ Բալայանին նշանակել է Երևանի դատարաններից մեկի ավագ դատավոր: Տարվա վերջի դրությամբ Նարինե Նալբանդյանը շարունակել է կրել իր պատիժը: Դեկտեմբերին վճռաբեկ դատանը վարույթ է ընդունել լրացուցիչ քննության ենթարկելու հիմնական գործը՝ որի համաձայն ընտանիքը դատապարտվել էր:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները շարունակել են ընդգծել այն մարդկանց մարդու իրավունքների ոտնահարումները, ովքեր կրում են իրենց պատիժը որպես ցմահ բանտարկյալներ: Ըստ այս խմբի, ցմահ բանտարկության դատապարտվածներին հնարավորություն չի տրվել, որպեսզի նրանց գործերը դատական կարգով էականորեն վերանայվեն, այն դեպքերում, երբ քրեական օրենսդրության մեջ եղել են փոփոխություններ, որոնք հնարավոր է փոխեին նրանց ցմահ բանտարկությունն ավելի մեղմ

պատժով: Ըստ իրավապաշտպան խմբերի ցմահ դատապարտվածների մասով արդարադատության ապահովման հարցում ամենամեծ խոչընդոտներից էր այն, որ դատարանի կարգադրությամբ գործի նյութերն ու իրեղեն ապացույցները ոչնչացվում էին: Սա դատապարտյալներին զրկել է նոր ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով իրականացվող քրեափորձաքննությունների, օրինակ՝ ԴՆԹ փորձաքննության հիման վրա իրենց գործը վերանայելու հնարավորությունից:

Դատաքննություն

Մինչ օրենքը նախատեսում է անմեղության կանխավարկածը, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսը և տեղական լրատվամիջոցները հաղորդել են այնպիսի դեպքերի մասին, երբ պաշտոնյաները խախտել են այս իրավունքը: Այնուհանդեր ՀՀՔԿ-ն և ՀՔԾ-ն վերահաստատել են կասկածյալների անմեղության կանխավարկածը իրենց մամլո հաղորդագրություններում:

Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լսումները լինեն դռնբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից ելնելով լինում են բացառություններ: Դատավարությունների ժամանակ չկան երդվյալ ատենակալներ: Առաջին ատյանի դատարաններում դատավճիռ կայացվում է մեկ դատավորի կողմից (բացի այն դեպքերից, երբ հանցանքի համար կարող է սահմանվել ցմահ բանտարկություն), իսկ ավելի բարձր ատյանի դատարաններում՝ դատավորների խորհրդի կողմից: Մեղադրյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է մեղադրյալներին փաստաբան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Փաստաբանների թվի սղության պատճառով հաճախ այս պարտավորությունը Երևանից դուրս չի ապահովվել: Ըստ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի և այլ դիտորդների, չնայած որ հանրային պաշտպանության համակարգի ստեղծումը դրական և անհրաժեշտ քայլ է եղել, հանրային պաշտպանների խիստ

ծանրաբեռնվածությունը, անբավարար թիվն ու ցածր աշխատավարձերը չէին նպաստել որակյալ իրավաբանական օգնության տրամադրմանը, մասնավորապես Երևանից հեռու շրջաններում։

Օրենքը մինչդատական փուլում սահմանափակում է մեղադրյալի իրավունքներն ու պաշտպանությունը նախապատրաստելու համար նախատեսված ժամանակը՝ մեղադրյալին և փաստաբանին թույլ տալով մուտք ունենալ հետաքննական նյութերին միայն նախնական հետաքննության ավարտից հետո։ Օրենքի համաձայն մեղադրյալները կարող են առերեսվել վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն մեղադրյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին կամ ոստիկանությանը, մինչդեռ դատարանները կանոնավոր ստացել են այդ նյութերը։ Մասնավորապես՝ օրենքն արգելում է ոստիկաններին ի պաշտոնե ցուցմունք տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող։ Դատավորները չեն կամեցել վիճարկել ոստիկանության փորձագետների ներկայացրածը՝ խոչընդոտելով արժանահավատ պաշտպանություն ներկայացնելու մեղադրյալի կարողությանը։ Պաշտպանության առումով մեկ այլ խոչընդոտ է այն, որ դատավորները վերահսկել են «վկաների ցանկը» և որոշում կայացրել, թե այդ դրանցից որոնք են հանդիսանում գործի առնչությամբ առավել կարևորները։ Պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքել են, որ դատավորները երբեմն իրենց թույլ չեն տվել կանչել կամ դատավարության ժամանակ ապահովել այնպիսի վկաների ներկայությունը, ովքեր իրենց գնահատմամբ ունեցել են ապացույցներ, որոնք կարող էին օգտակար լինել իրենց պաշտպանյալի համար։ Համաձայն իրավաբանների և ներպետական ու միջազգային իրավապաշտպան դիտորդների, մեղադրող կողմը գերիշխող դիրք է պահպանել քրեական արդարադատության համակարգում։

Մեղադրյալները, դատախազները և տուժող կողմն ունեն բողոքարկման իրավունք և դրանից հաճախ են օգտվել։

Ակնկալվել է, դատավորները մեղադրյալին մեղավոր կճանաչեն գրեթե բոլոր գործերով և դատարան ուղարկված քրեական գործերի մեծ մասը, ներառյալ շատ թույլ գործեր, ավարտվել են դատապարտմամբ: Դատապարտումների բարձր ցուցանիշը նաև կարող է վերագրվել ոստիկանության այն գործելակերպին, որ ոստիկանության քննիչներն ամենաթույլ հիմնավորմամբ գործերը չեն ուղարկել դատարան: Ըստ դատական վիճակագրության դատարանները կայացրել են 92 արդարացման վճիռ տարվա առաջին տաս ամիսներին, երբ կայացված ընդհանուր վճիռների թիվը կազմել է 2,185, և դրանցից միայն 69-ն են եղել ամբողջական արդարացման վճիռներ:

Մարտի 31-ին ՀՔԾ-ն կարճել է իր հետաքննությունը կապված այն մեղադրանքների հետ, որ ոստիկանությունը ֆիզիկական բռնություն և այլ վատ վերաբերմունք է կիրառել 2014թ. բնակարանային գողության մեջ մեղադրվող Ալեքսանդր Ցվերիանովի նկատմամբ՝ նրանից խոստովանություն կորզելու նպատակով: ՀՔԱՎ-ը, որն իրավական աջակցություն էր ցուցաբերում Ցվերիանովին, բողոքարկել է ՀՔԾ որոշումը դատարանում, բայց առաջին ատյանի դատավոր Արթուր Մկրտչյանը մերժել է բողոքը: Հետաքննությունը հանձնարարվել էր դատարանի կողմից, երբ այն արդարացրել էր Ցվերիանովին՝ նրա վրայից հանելով գողություն կատարելու մեղադրանքները, քանի որ Էրեբունու ոստիկանական բաժանմունքում խոստովանություն էր կորզվել հարկադրանքի միջոցով:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

Քաղբանտարկյալների կամ կալանավորվածների վերաբերյալ հաղորդումներ չեն եղել, բայց իրավապաշտպանները շարունակել են պնդել, որ իշխանություններն օրենքները շարունակել են կիրառել ընտրողաբար և նախընտրել են դատական կարգով հետապնդել որոշակի անհատների և ոչ մյուսներին՝ նրանց քաղաքական հայացքների վրա հիմնվելով:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Չնայած որ քաղաքացիները հնարավորություն են ունեցել դիմել դատարան մարդու իրավունքների ոտնահարումների համար փոխհատուցում ստանալու կամ իրավախախտումներին վերջ դնելու վերաբերյալ հայցով, լայնորեն ընկալվել է, որ դատարանները կոռումպացված են: Քաղաքացիների համար նաև հնարավորություն է եղել դիմել Օմբուդսմենի գրասենյակ, ինչպես նաև վիճարկել օրենսդրությունը Սահմանադրական դատարանում: Մինչ Սահմանադրական դատարանն իրականացրել է իր լիազորությունը՝ որոշելու օրենսդրական ակտիերի սահմանադրականությունը տասնյակ գործերով, ավելի ցածր ատյանի դատարանները, որոնք ավելի շուտ ստորադասվում են Վճռաբեկ դատարանին այլ ոչ Սահմանադրական դատարանին, նրա վճիռներն ի կատար են ածել անհավասար կերպով:

Քաղաքացիները, ովքեր սպառում են ներպետական իրավական միջոցները, կարող են կառավարության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ենթադրելի խախտումներ ներառող բողոքներով դիմել ՄԻԵԴ: Կառավարությունը որպես կանոն տրամադրել է ՄԻԵԴ-ի վճիռներով սահմանված դրամական փոխհատուցումները, սակայն սովորաբար չի վերաբացել այն գործերը, որոնց վերաբերյալ ՄԻԵԴ-ը վճիռ է կայացրել, և դատարանները հաճախ չեն հետևել ՄԻԵԴ-ի կիրառելի նախադեպերին:

զ. Կամայական միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը: Այնուհանդերձ եղել են հաղորդումներ այն մասին, որ իրավապահ մարմինները միշտ չէ, որ հետևել են այս արգելքներին:

Իշխանությունները չեն կարող օրինականորեն հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությանը հետևել կամ խուզարկություն կատարել, եթե դատավորից չեն

ստացել նման թույլտվություն, որը պետք է հիմնված լինի հանցավոր գործողությունների մասին համոզիչ ապացույցների վրա: Իրավապաշտպանները նշել են, որ ոստիկանությունը երբեմն խուզարկություններ է իրականացրել տներում առանց հրամանագրի՝ խուզարկության մեջ գտնվող անձանց գտնելու ենթատեքստով: Չնայած իրավապահ մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են իրավական ընթացակարգին, սակայն փաստաբանները պնդում են, որ դատավորները հաճախ գաղտնալսման, նամակագրությանը հետևելու ու խուզարկության թույլտվությունները շնորհելիս չեն պահանջում ներկայացնել հանցավոր գործունեության հիմնավոր ապացույցներ, ինչը պահանջվում է օրենքով՝ սահմանված իրավական ընթացակարգը մեծ չափով դարձնելով զուտ ձևականություն: Ըստ հաղորդումների իշխանությունները բազմիցս իրականացրել են հեռախոսազրույցների գաղտնալսում, էլեկտրոնային փոստի և թվային հաղորդակցության այլ միջոցների վերահսկողություն այն անհատների նկատմամբ, ում որ կառավարությունը ցանկացել է պահել խիստ հսկողության տակ, նրանց թվում՝ իրավապաշտպան ակտիվիստների և քաղաքական գործիչների նկատմամբ:

Տարվա ընթացքում լրագրող և Ժառանգություն կուսակցության խորհրդի անդամ Հրայր Մանուկյանը անհաջող փորձեր է կատարել խթանելու քրեական հետաքննություն ԱԱԾ ներկայացուցիչ Վլադիմիր Հակոբյանի նկատմամբ 2014թ. հունիսին իրեն որպես ԱԱԾ իրազեկիչ ներգրավելու փորձի համար: Հրայր Մանուկյանը գաղտնի ձայնագրել և հրապարակել է Հակոբյանի հետ զրույցը, որի ընթացքում Հակոբյանը սպառնացել է Մանուկյանին և նրա ընտանիքին՝ համագործակցելու վերջինիս հրաժարվելուց հետո: Հուլիսի 18-ին Նախագահը Հակոբյանին նշանակեց իր մամլո խոսնակի պաշտոնում:

Մաս 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ա. Խոսքի և մամուլի ազատություն

Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված է խոսքի և մամուլի ազատությունը, սակայն կառավարությունը միշտ չէ, որ պաշտպանել է այս իրավունքները: Տպագիր, առցանց և հեռարձակող լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ արտահայտել են կարծիքներ, որոնք հաճո են իրենց սեփականատերերին կամ գովազդատուներին, ովքեր պետական պաշտոնյաներ կամ օլիգարխներ են: Եղել են բռնության մի քանի միջադեպեր լրագրողների նկատմամբ՝ կապված նրանց կողմից քաղաքացիական բողոքի ակցիաների լուսաբանման հետ:

<u>Խոսքի և արտահայտվելու ազատություն.</u> Չնայած որ մարդկանց մեծ մասը կարողացել է հրապարակավ և մասնավոր ձևով քննադատել կառավարությանը, ինչպես նաև քննարկել ընդհանուր հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր՝ առանց հաշվեհարդարից վախենալու, այնուամենայնիվ լրատվամիջոցների ներկայացուցիչները հաճախ են ենթարկվել ինքնագրաքննության՝ պաշտոնական հետապնդումներից խուսափելու նկատառումով: 2014 թ. վերջից ի վեր տեղի են ունեցել բռնության միջադեպեր ակտիվիստների և քաղաքական գործիչների նկատմամբ, ովքեր քննադատել են կառավարությանը: Այս միջադեպերի մեծ մասը դեռ մնում է չլուծված: Նմանօրինակ մի հարձակման արդյունքում 2014թ. դեկտեմբերին հիվանդանոց տեղափոխվեց Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավոր Արամ Մանուկյանը, ով տուժել էր ցնցումից, քերծվածքներից և դեմքի կապտուկներից: Ոստիկանությունը Մանուկյանի վնասվածքները «թեթև» էր որակել, իսկ հուլիսի 18-ին դատարանը Արշատ Այվազյանին մեկ ամսվա ազատազրկման էր դատապարտել հարձակման համար: ՀՀՔԿ դադարեցրել էր առնվազը նմանօրինակ չորս այլ հարձակումների գործով իր հետաքննությունը՝ պնդելով, որ հանցագործները չեն հայտնաբերվել:

Հուլիսի 16-ին, ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերի ներկայացուցիչ Դունյա Միայտովիչը նամակ է գրել արտաքին գործերի նախարարին՝ արտահայտելով մտահոգություն կապված *ILur.am* լրատվական կայքի խմբագիր Քրիստինե Խանումյանի նկատմամբ ՀՔԾ-ի սկսած քրեական հետաքննության հետ: Դատախազները մեղադրել էին Խանումյանին դատարանի հրամանը միտումնավոր չկատարելու մեջ, որի համաձայն պորտալը պետք է հրաժարվեր տարածքային ոստիկանության պետի

կողմից կատարված չարաշահումների վերաբերյալ Խանումյանի հոդվածի գաղտնի աղբյուրները բացահայտելու իր ավելի վաղ հիմնավորած մերժումից: Դատապարտումը կարող էր հանգեցնել մեծ տուգանքների և մինչև երկու տարի ազատազրկման: ԵԱՀԿ-ի միջամտությունից հետո դատախազները հանեցին մեղադրանքները Խանումյանի վրայից: Հոկտեմբերի 20-ին Սահմանադրական դատարանը վճռեց, որ աղբյուրների բացահայտումը Խանումյանի հոդվածի առնչությամբ հարկադրելը հիմնավորված չէր:

<u>Մամուլի և լրատվամիջոցների ազատություն.</u> Տպագիր և հեռարձակող լրատվամիջոցները հիմնականում չեն ապահովել քաղաքական բազմակարծություն ու օբյեկտիվ լուսաբանում: Էրագրերի մեծ մասը պատկանում են մասնավոր անձանց կամ խմբերի, իսկ այն թերթերը, որոնց շրջանառությունը սահմանափակ է եղել, հակված են եղել արտացոլելու իրենց սեփականատերերի կամ ֆինանսական հովանավորների քաղաքական դիրքորոշումները, որոնք իրենց հերթին հաճախ մոտ են կանգնած եղել կառավարությանը: Քաղաքական զգայուն թեմաների վերաբերյալ լրատվամիջոցները մեծ մասամբ տրամադրել են միայն իշխանության կողմից աջակցվող տեսակետներ և վերլուծություններ:

Հեռարձակվող լրատվամիջոցները, հատկապես հանրային հեռուստատեսությունը շարունակել է մնալ որպես նորությունների ու տեղեկատվության ստացման առաջնային աղբյուր ազգաբնակչության մեծ մասի համար: Իշխող կուսակցության քաղաքական գործիչները և քաղաքականորեն կապված գործադիրները տնօրինել են կայանների մեծ մասը, իսկ կայանները ներկայացրել են իրադարձությունների միակողմանի տեսակետներ: Մարզային հեռուստաընկերությունները ներկայացրել են որոշակի այլընտրանքային տեսակետներ, սովորաբար արտաքին արտադրության նյութերի միջոցով: Իշխանություններն այդպես էլ չհրապարակեցին Հայաստանի ռադիոհեռուստատեսային հաճախականությունների մասին աուդիտի խոստացված տվյալները, որի հիման վրա տեխնիկապես հիմնավորվել էր թվային հեռարձակման լիցենզիաների թվի սահմանափակումը, երբ անցում կկատարվեր անալոգային համակարգից դեպի հեռարձակման

թվային համակարգ: Թվային հեռարձակումը, որն ի սկզբանե ծրագրված էր սկսել հուլիսի 1-ին, հետաձգվեց վեց ամսով՝ ըստ հաղորդված տեղեկությունների:

Կառավարությունն ընդհանուր առմամբ չի վերահսկել առցանց լրատվամիջոցների բովանդակությունը: Առցանց լրատվական աղբյուրներն ու սոցիալական ցանցերը եղել են տեղեկատվական կարևոր այլընտրանքային աղբյուր: Ի տարբերություն հեռարձակվող լրատվամիջոցների, նրանք տրամադրել են բազմազան քաղաքական կարծիքներ: Քաղաքական կարևոր իրադարձությունների ուղիղ հեռարձակումը կարևորություն է ձեռք բերել առցանց լրատվական աղբյուրների շրջանում այս տարվա ընթացքում: Այնուհանդերձ, առցանց լրատվամիջոցները նույնպես ունեցել են հովանավորների և գովազդատուների քաղաքական ազդեցության նշաններ: Եղել են արժանահավատ հաղորդումներ կառավարությանն առընթեր մի քանի անհատների կողմից թե՛ առցանց և թե՛ հեռարձակող լրատվամիջոցների շարունակվող համախմբման վերաբերյալ: Ավանդական և առցանց լրատվական միջոցների սեփականատերերը շարունակել են մնալ ստվերում:

<u>Բռնություն և ոտնձգություններ.</u> Տարվա ընթացքում երբեմն գրանցվել են մի շարք հարձակումներ լրագրողների նկատմամբ: Կառավարությունը չի վարել նշված հարձակումների արժանահավատ հետաքննություն:

Մի շարք առիթներով ոստիկանությունը բռնություն է կիրառել լրագրողների նկատմամբ, ովքեր լուսաբանել են քաղաքացիական բողոքները: Այդ դեպքերից ամենաուշագրավը տեղի է ունեցել հունիսի 23-ին, երբ ոստիկանությունը էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ Երևանի կենտրոնում խաղաղ նստացույցը ցրելու ժամանակ ծեծի է ենթարկել և կալանավորել մի խումբ լրագրողների, վնասել նրանց սարքավորումները և ջնջել հիշողության քարտերի վրա պահված ձայնագրությունները: 24 լրագրողների և օպերատորների հաղորդումները մատնացույց էին անում, թե ինչպես է ոստիկանությունը ֆիզիկական հարձակում գործել իրենց վրա կամ այլ ձևերով խոչընդոտել իրենց գործունեությանը: Բոլորը պնդում էին, որ թիրախավորումը

կանխամտածված էր և որ ոստիկանությունն անտեսում էր իրենց մամուլի հավատարմագրման նշաններն ու իրենց տեսախցիկների վրայի պատկերանիշերը (լոգոները)։ Հունիսի 23-ին տարածած մի հայտարարության մեջ ոստիկանությունը պնդել էր, որ լրագրողները չէին ենթարկվել «ոստիկանների պահանջներին ազգային ժողովի շենքից ողջամիտ հեռավորություն պահպանելու վերաբերյալ, որպեսզի չխանգարեն ոստիկաններին խաղաղ իրականացնել իրենց պարտականությունները»։ Նույն օրը մամուլի հետ խոսելիս սակայն ոստիկանապետը հրապարակավ ներողություն խնդրեց։ Նույն օրն իշխանությունները հաղորդեցին, որ մեկ սպա հեռացվել է ծառայությունից, իսկ 11 այլ սպաներ նկատողություն են ստացել անհամաչափ ուժի կիրառման համար։ Նրանք վերադարձրեցին կամ փոխարինեցին որոշ լրատվական աղբյուրների վնասված սարքավորումները։ Դիտորդները համարել են, որ ՀՔԾ-ի սկսած քրեական հետաքննությունը մակերեսային է։ Սեպտեմբերի 11-ի դրությամբ դատախազները որևէ մեկին չարաշահման մասին մեղադրանք չեն ներկայացրել։

Լրագրողների նկատմամբ բանավոր հարձակումները Ազգային ժողովի անդամների կողմից դեռ չեն վիճարկվել ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովի կամ կառավարության այլ պաշտոնյաների կողմից։ Օրինակ պաշտպանության նախարարի կնոջ վերաբերյալ քննադատական հոդվածներին իր պատասխան Ազգային ժողովի պատգամավոր իշխող ՀՀԿ կուսակցության անդամ Առաքել Մովսիսյանը հայտարարել է, որ «կգլխատի եւ կբռնաբարի» բոլոր նրանց, ովքեր կանգնած են այդ հոդվածների հետևում։

<u>Գրաքննություն ու բովանդակային սահմանափակումներ.</u>
Լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռարձակող լրատվամիջոցները իշխանություններին քննադատող նյութեր ներկայացնելու դեպքում վախենում էին հաշվեհարդարից։ Հաշվեհարդարի դրսևորումներ կարող էին լինել դատական հայցերը, հեռարձակման լիցենզիան կորցնելու սպառնալիքը, կամայական հարկային ստուգումները կամ եկամուտների կորուստը, երբ գովազդատուներն իմանում էին, որ լրատվամիջոցը

բարեհաճ չէ իշխանությունների նկատմամբ։ Հաշվեհարդարի վախը լրատվամիջոցներում հանգեցրել է ինքնագրաքննության ։

Ինտերնետի (համացանցի) ազատություն

Կառավարությունը չի սահմանափակել կամ ընդհատել ինտերնետի հասանելիությունը և չի իրականացրել առցանց բովանդակության գրաքննություն։ Անհատներն ու խմբերն ընդհանուր առմամբ կարողացել են տեսակետներ արտահայտել ինչպես ինտերնետի այնպես էլ էլեկտրոնային փոստի միջոցով։ Որոշ իրավապաշտպան ակտիվիստներ ու ընդդիմադիր կուսակցությունների անդամներ պնդում են, որ իշխանությունները հսկել են իրենց էլեկտրոնային փոստն ու ինտերնետային գրագրությունը՝ առանց դատական վերահսկողության կամ դրա ֆորմալ առկայությամբ (տես՝ բաժին 1.զ)։

Ըստ Միջազգային հեռահաղորդակցության միության տվյալների 2014թ Հայաստանում ինտերնետից օգտվում էր ազգաբնակչության 46.3 տոկոսը։

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Եղել են իշխանությունների կողմից ուսումնակրթական ազատության ու մշակութային միջոցառումների սահմանափակումների մասին որոշ հաղորդումներ։

Կրթօջախների մեծ մասը զերծ են մնացել իշխանություններին հրապարակավ քննադատելուց և ինքնագրաքննության որոշակի դրսևորումներ են հանդես բերել։ Առաջատար պետական բուհերի ղեկավարությունը քաղաքականացված ու փոխկապակցված է իշխող Հանրապետական կուսակցության հետ։ Օրինակ, Երևանի պետական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նախագահն է Սերժ Սարգսյանը, որը նաև երկրի նախագահն է։ Կառավարության նախարարները գլխավորել կամ անդամակցել են բուհերից շատերի Հոգաբարձուների խորհուրդներին։ Ըստ մարդու իրավունքների

դիտորդների՝ կրթօջախներից շատերի ուսանողական խորհուրդները ենթարկվել են ճնշման ամենատարբեր ձևերի և ակնկալվել է, որ աջակցեն համալսարանի, այլ ոչ թե ուսանողական խմբերի շահերին: Տարվա ընթացքում, ի տարբերություն 2014 թ., դասախոսական կազմի անդամների՝ նրանց քաղաքական պատկանելության կամ տեսակետների պատճառով աշխատանքից ազատվելու մասին զեկույցներ չեն եղել:

Գյումրու պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողները սեպտեմբերին բողոքարկել են ուսանողական խորհրդի ընտրությունների ընթացակարգը՝ մեղադրելով բուհի դասախոսական կազմին, մասնավորապես ՀՀԿ երիտասարդ կողմնակիցներին՝ ուսանողական խորհրդի կողմից իշխող կուսակցության տեսակետներն արտահայտելու միջամտության համար:

բ. Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Հավաքների ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է հավաքների ազատության իրավունքը: Թեպետ իշխանությունները հաճախ հարգել են այս իրավունքը, սակայն ոստիկանները երբեմն բռնություն, ինչպես նաև անհամաչափ խիստ ուժ են կիրառել ընդդեմ ցուցարների կամ կամայականորեն կալանավորել են նրանց, իսկ հակառակ դեպքում՝ խոչընդոտել խաղաղ հավաքները:

Չեն եղել հաղորդումներ այն մասին, որ պաշտոնյաները խափանել են քաղաքական հանրահավաքները, բայց եղել են դեպքեր, երբ ոստիկաններն արգելքներ են ստեղծել քաղաքացիական ակտիվիստների խաղաղ ցույցերի դեմ, ընդ որում նման ցույցեր սոցիալական ու մարդու իրավունքների հարցերի շուրջ տարվա ընթացքում հաճախ են եղել: Չնայած բազմաթիվ բողոքների, ցույցերը խաղաղ բնույթ են կրել, սակայն որոշ դեպքերում ցուցարարներն ակտիվորեն ձգտել են հրահրել կամ ոստիկանների հետ ներգրավվել ֆիզիկական վեճերի:

Սեպտեմբերի 15-ին, Հելսինկյան ասոցիացիա կոմիտեն 2014-15 թթ. 99 ցույցերի և երթերի դիտարկումների հիման վրա բացահայտումներ է հրապարակել: Միջոցառումներից 74-ը կազմակերպել էին քաղաքացիական ակտիվիստները, և այդ հավաքների ավելի քան 50 տոկոսի ժամանակ եղել են 100-ից քիչ մասնակիցներ: Ըստ զեկույցի՝ ոստիկանության քանակական ներկայությունը այդ միջոցառումներին հաճախ անհամաչափ է եղել: Զեկույցում նշվել են ոստիկանության միջամտության 26 դեպք: Դրանցից ութ դեպքերի ժամանակ նրանք ձերբակալել են մասնակիցներին: Դեպքերից հինգում նրանք դադարեցրել են մասնակիցների շարժումները, կամ փողոցներից բռնի տեղահանել, ու նրանց նկատմամբ բռնություն գործադրել, որի արդյունքում հասցվել են մարմնական վնասվածքներ: Զեկույցում կասկածի տակ են առնվել նաև ոստիկանության կիրառած մեթոդները, ինչպիսիք են՝ մասնակիցներին ուղղված հրամանները կամ ցուցումները, առանց հիմնավորումների կամ պատճառի, իսկ հետագայում, չենթարկվելու դեպքում, «օրինական պահանջին» ցույց տված դիմադրության համար՝ մեղադրանքը:

Հիշեցնենք, որ ապրիլի 7-ին, աննախադեպ որոշմամբ, վարչական դատարանի դատավոր Լիանա Հակոբյանը մերժել էր Արա Նեդոլյանի հարուցած վերաքննիչ բողոքը ոստիկանության կողմից նրա դեմ վարչական գործ հարուցելու վերաբերյալ, որին վերջիններս կալանել էին 2014 թ.հունվարին՝ Ազատության հրապարակում, բողոքի ակցիայի ժամանակ: Դատավոր Հակոբյանը բացառել էր, թե ոստիկանությունը գործել է անօրինական ձևով, քանի որ նրանք դադարեցրել էին բողոքի ակցիան, չէին կարողացել տեղում տուգանել Նեդոլյանին և նրան պահել էին ոստիկանական բաժանմունքում երկու ժամ վարչական տուգանքի նշանակման համար անհրաժեշտ թղթաբանությունն ավարտելու համար: Դատավորը հայտարարել էր, որ Նեդոլյանի ձերբակալությունը հաջորդել էր ոստիկանական պահանջներին նրա չենթարկվելուն: Վերջինս փոխել էր հավաքի վայրը՝ դրանով իսկ խախտելով հավաքների ազատության և արտահայտվելու իր իրավունքները:

Հունիսի 19-ին, էլեկտրաէներգիայի սակագների առաջարկվող բարձրացման շուրջ հանրային բողոքի ցույցեր ու նստացույցեր եղան

ինչպես Երևանում այնպես էլ այլուր: Հունիսի 22-ին, ոստիկանությունը Երևան քաղաքում արգելափակեց բողոքի երթը դեպի նախագահի նստավայր, որի արդյունքում նստացույցը տեղի ունեցավ մեկ այլ խոշոր խաչմերուկում: Ոստիկանները և ցուցարարները շարունակեցին խաղաղ բանակցությունները, սակայն հունիսի 23-ի վաղ առավոտյան ոստիկանությունը ցրեց ամբոխը, այդ թվում՝ շատ մոտ տարածությունից օգտագործելով ջրցան մեքենաներ: Տեսագրությունները ցույց են տալիս ոստիկանության հետապնդումները, ծեծկռտուքը և ցուցարարների կալանավորումը՝ նստացույցից մի քանի թաղամաս այն կողմ: Համաձայն տեսագրության, քաղաքացիական հագուստով ոստիկանների 40-50 հոգանոց մի խումբ , որի անդամներից ոմանք կրում են «Ոստիկանություն» թևակապեր՝ այդ ժամանակ Երևանի ոստիկանության պետի տեղակալի գլխավորությամբ, որը նույնպես առանց համազգեստի է՝ պատասխանատու են չարաշահումների մեծ մասի համար: Մասնակիցներց շատերը տեղափոխվել են հիվանդանոց: Ոստիկանությունը ձերբակալել է 237 մասնակիցների (այդ թվում՝ կանանց, անչափահասների, լրագրողների և մարդու իրավունքի դիտորդների ու պաշտպանների), հիմնականում Երևանում, և մոտավորապես մի տասնյակ մարդու՝ Գյումրիում: Բոլորն էլ մեղադրվել են «խուլիգանության » մեջ: Ըստ ԶԼՄ-ների տեղեկատվության, ազգային ոստիկանության պետի տեղակալ Լևոն Երանոսյանը, իբր թե հանձնարարել էր ՃՈ աշխատակիցներին թիրախի տակ պահել լրագրողներին և ոչնչացնել նրանց սարքավորումները: Ոստիկանությունը որոշ ցուցարարների պահել էր մինչև 12 ժամ՝ առանց հստակեցնելու վերջիններիս կարգավիճակը, առանց փաստաբանի կողմից ներկայացված լինելու և առանց բժշկական օգնություն ապահովելու: Մարդու իրավունքների դիտորդները մեղադրել են ոստիկանությանը՝ անհամաչափ ուժ գործադրելու և ցուցարարներին, առանց համազգեստ կրելու՝ ապօրինաբար ցրելու մեջ: Երկրում օտարերկրյա առաքելությունների հրապարակային հայտարարություններից, և տեղական ու միջազգային մամուլի քննադատական լուսաբանումից հետո՝ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը հունիսի 23-ի ոստիկանության գործողությունների համար ներողություն է խնդրել լրագրողներից: Ոստիկանության գործողություններից հետո, ցուցարարների շարքերն էլ ավելի

համալրվեցին, և դրան հաջորդող օրերի ընթացքում ցույցերն ընթացան առանց ոստիկանների և ցուցարարների միջև առանձնակի միջադեպերի: Թեև մասնակցությունը աստիճանաբար նվազում էր, սակայան բազմությունը շարունակում էր երեկոնները հավաքվել՝ մինչև հուլիսի 6-ի վաղ միջօրեն, երբ ոստիկանները մաքրելով ինքնաշեն բարիկադները, հեռացրել ու բերման էին ենթարկել մնացած 46 ցուցարարներին՝ նույն օրն, ավելի ուշ, առանց մեղադրական գործ հարուցելու ազատ արձակելով: Հուլիսի 13-ին, Գասպարյանը հայտարարել էր, որ ինն ոստիկաններ, այդ թվում, այն ժամանակ Երևանի ոստիկանության պետի տեղակալը, նկատողություն են ստացել՝ կապված հունիսի 23-ի բռնությունների հետ: Ըստ մարդու իրավունքների խմբերի, այդ վարչական տույժերն անբավարար են և կրում են կոսմետիկ բնույթ:

Միավորումների ազատություն

Սահմանադրությունը և օրենքը ապահովում են այդ իրավունքը, և ընդհանուր առմամբ կառավարությունը հարգում է այն: Կառավարության կողմից չի ձևավորվել հասարակական կազմակերպությունների ֆինանսական կայունությանն օժանդակող իրավական դաշտ: Օրենքը թույլ չի տալիս հասարակական կազմակերպություններին իրենց ծառայությունների դիմաց ընդունել վճարումներ, ձևավորել հիմնադրամներ կամ ուղղակիորեն ձեռնամուխ լինել շահույթ հետապնդող գործունեության՝ իրենց գործառնական ծախսերը հոգալու ու կանոնադրությամբ սահմանված նպատակներին հասնելու համար: Արդյունքում հասարակական կազմակերպությունները կախման մեջ են գտնվում դրամաշնորհներից և նվիրատվություններից: (տես բաժին 5):

գ. Կրոնի ազատություն

Տես Պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը www.state.gov/religiousfreedomreport/ կայքում:

դ. **Տեղաշարժվելու ազատություն, ներքին տեղահանված անձինք, փախստականների պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձինք**

Օրենքով ապահովվում է երկրի ներսում տեղաշարժվելու, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը: Ներքին տեղահանված անձանց, փախստականներին, վերադարձող փախստականներին ու ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց ու այլոց պաշտպանելու ու աջակցելու նպատակով իրավասու մարմինները համագործակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի (UNHCR) և մարդասիրական այլ կազմակերպությունների հետ:

Տեղաշարժ երկրի ներսում. Եղել են առանձին հաղորդումներ լրատվամիջոցներում, այն մասին որ իշխանությունները քաղաքական հանրահավաքներին մասնակցությունը կանխելու համար սահմանափակել են տեղաշարժը:

Արտասահմանյան ուղևորություններ. Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Երկրից ժամանակավոր բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է հեշտությամբ ձեռք բերել մեկ օրվա ընթացքում՝ վճարելով 1000 դրամ (($ 1.90) յուրաքանչյուր տարվա համար:

Ներքին տեղահանված անձիք (ՆՏԱ)

Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ պատերազմի ընթացքում Հայաստանի իշխանությունները սահմանային գոտիներից տարհանել են մոտ ~~ավորապես~~ 65000 տնային տնտեսություն, բայց Ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) մեծամասնությունը ավելի ուշ ~~հետո~~ վերադարձել է ~~են~~ իրենց բնակավայրերը կամ բնակություն ~~են~~ հաստատել այլ վայրերում: Երկրի որոշ ՆՏԱ-ների ու նախկին փախստականների համար դեռևս ապահովված չեն համարժեք բնակարանային պայմաններն, իսկ տնտեսական հնարավորությունները

սահմանափակ են: Ներքին տեղահանումների կենտրոնի մայիս ամսվա դիտարկումների համաձայն երկրում դեռևս կա 8,400 ՆՏԱ:

Ապաստանի մատչելիություն. Համաձայն օրենքի նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրումը, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: Օրենքն ունի մի շարք թերություններ, և մարդու իրավունքների հարցերով դիտորդները կարծում են, որ ապաստան հայցելու ընթացակարգերը չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին: Ոչ հայկական ծագում ունեցող հնարավոր ապաստան հայցողների համար տարածք մուտք գործելու վերաբերյալ առկա տեղեկատվությունը շատ սահմանափակ է եղել, չնայած հաղորդված երեք գործերով ՄԱԿ ՓԳՀ-ի (UNHCR) միջամտությունից հետո, իշխանությունները դյուրացրել են տարածք մուտք գործելու և ապաստան հայցելու մասին ընթացակարգը: Տարվա ընթացքում Պետական միգրացիոն ծառայությունը որդեգրել է նոր գործառնական ընթացակարգեր, որոնք խթանում են միջազգային չափանիշներին առավել համահունչ մոտեցումներ:

Զարաշահումներ փախստականների նկատմամբ. 2012թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն մտահոգություն էր հայտնել այն մասին, որ իշխանությունները որոշ ապաստան հայցողների նկատմամբ քրեական հետապնդում էր իրականացվել՝ երկիր անօրինական մուտք գործելու համար, թեպետ նրանք մատնանշել էին, որ ապաստան են հայցում: Ընդհանուր առմամբ իրավասու մարմիններն ապաստան հայցելու մասին հայտը գրանցելուց հետո ազատ չեն արձակել այն ապաստան հայցողներին, ովքեր երկիր անօրինական մուտք գործելու համար պատիժ էին կրում, և նրանցից պահանջվել է կրել պատժի մնացած մասը: Տարվա առաջին 8 ամիսների ընթացքում անօրինական սահմանահատման համար իշխանությունների կողմից քրեական հետապնդում է իրականացվել մեկ ապաստան հայցողի նկատմամբ: Անկախ դիտորդներին հնարավորություն է տրվել հանդիպելու կալանավորների հետ: Տարվա ընթացքում իշխանությունները՝ անդրադառնալով ապաստան հայցողների կալանավորմանը, ճշգրտել են իրավական դաշտը, և ընդամենը մեկ ապօրինաբար սահանը հատող

ապաստան հայցող է ազատ արձակվել: ՄԱԿ ՓԳՀ-ն հաղորդում էր, որ սահմանն ապօրինաբար հատելու համար իշխանությունները ձերբակալել են երկու աֆղանստանցի ապաստան հայցողների: Միգրացիոն պետական ծառայության տվյալներով դեկտեմբերի դրությամբ երկու անհատներն էլ դեռևս բանտում են՝ անգամ նրանց ապաստան հայցելու մասին հայտը գրանցելուց հետո:

Ազգությամբ ոչ հայ ապաստան հայցողների դիմումների մերժումը, որը հաճախ արվում է ազգային անվտանգության նկատառումներով, շարունակել է մտահոգության տեղիք տալ: Տարվա ընթացքում իշխանությունները փախստականի կարգավիճակի մերժումն արդարացնելու համար, որոշել են, որ մի փոքր աֆրիկյան փախստականների խմբի երկրներում հանգամանքները բավականաչափ փոխվել են՝ ի հակառակ ՄԱԿ ՓԳՀ տրամադրած տեղեկատվության: Տարվա ընթացքում ետ վերադարձման դեպքեր չեն զեկուցվել:

<u>Հիմնական ծառայությունների հասանելիությունը.</u> Իշխանությունները երկրում մնացող ազգությամբ հայ սիրիացիներին առաջարկել են արագացված ընթացակարգով քաղաքացիություն, ապաստանի թույլտվություն կամ փախստականի կարգավիճակի տարբերակների ընտրություն: Մշտական բնակչի կարգավիճակը և քաղաքացիության արագացված ընթացակարգը փախստականներին տալիս է նույն առողջապահական և շատ այլ սոցիալական ծառայություններից օգտվելու իրավունքները, ինչ որ ունեն մյուս քաղաքացիները: Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված 1991-94թթ. փախստականներին տրամադրված կացարանները սովորաբար եղել են ոչ բավարար քանակի և ունեցել են վատ պայմաններ: Տարվա ընթացքում իշխանությունները տարբեր վայրերում 29-ը փախստականների համար բացել են ինտեգրման տներ՝ նրանց փախստականի կարգավիճակը ձեռք բերելու առաջիկա մի քանի ամիսներին անվճար կացարաններ ապահովելու նպատակով: Լեզվական տարբերությունները, նույնիսկ սիրիահայ փախստականների, ովքեր խոսում են հայերնի այլ բարբառով, ստեղծում են զբաղվածության, մասնավորապես կրթության համար խոչընդոտներ: Բացի այդ, փախստականները կանգնած են այն նույն սոցիալ-տնտեսական խնդիրների առջև, ինչ որ ընդհանուր

ազգաբնակչությանը: Ազգությամբ ոչ հայ էթնիկ փախստականները քաղաքացիության համար պետք է ունենան երկրում երեք տարվա օրինական կացության իրավունք:

Փախստականները կարող են դիմել դատարաններ, այդ թվում Մարդու իրավունքների Եվրոպական դատարան (ՄԻԵԴ): Հունիսի 16-ին ՄԻԵԴ-ը (ECHR) վճիռ է կայացրել՝ Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի գործով: Դիմողն ազգությամբ հայ փախստական է, ով ի վիճակի չի եղել վերադառնալ իր տուն Ադրբեջան՝ ղարաբաղյան չլուծված հակամարտության պատճառով, և ով պետք է փոխհատուցում ստանա Ադրբեջանի կառավարության կողմից՝ գույքային պահանջների մեխանիզմի միջոցով:

Հիմնարար լուծումներ. Սիրիայից ժամանած ազգությամբ հայ անձանց համար, ովքեր որոշում են մնալ երկրում, կառավարությունն առաջարկում է արագացված կարգով քաղաքացիության շնորհում: Տարվա ընթացքում Պետական միգրացիոն ծառայությունում ստեղծվել է ինտեգրացիոն դիտարկումների նոր ստորաբաժանում՝ ազգային ինտեգրման ռազմավարության մշակման հանձնարարականով:

Քաղաղացիություն չունեցող անձինք

2013թ. հունիսի 30-ի դրությամբ, ըստ ՄԱԿ ՓԳՀ-ի (UNHCR), երկրում կար կացության իրավունք ունեցող 113 քաղաքացիություն չունեցող անձ: Բացի այդ, քաղաքացիություն չունեին նաև Ադրբեջանից եկած 1,542 փախստականներ: Մայիսին, Ազգային ժողովը փոփոխել է քաղաքացիության օրենքը, ի թիվս այլոց (inter alia), կանխելու անձանց Հայաստանի քաղաքացիությունից հրաժարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք քաղաքացիություն են ձեռք բերում մեկ այլ երկրում (դրանով իսկ կանխելով նրանց քաղաքացիություն չունենալը, և կամ զինվորական ծառայությունից կամ այլ քաղաքացիական պարտավորություններից խուսափելը): Փոփոխությունները թույլ են տալիս երկրում ծնված երեխաներին, որոնք այլ իրավիճակում կլինեին քաղաքացիություն չունեցող անձնիք՝ գրանցվել որպես քաղաքացիներ: Կային նաև զվաճալի վկայություններ փաստաթղթեր չունեցող անձանց

մասին, ովքեր չունեին քաղաքացիություն կամ գտնվում էին քաղաքացիություն չունեցող անձ դառնալու վտանգի առաջ՝ պայմանավորված շարունակվող միգրացիայի կամ երկրի ամենահեռավոր շրջաններում բնակվելու հանգամանքով, որտեղ որոշ մարդիկ դեռևս Խորհրդային անձնագրեր ունեն: Հպատակագրման դիմում ներկայացրած անձինք մերժման դեպքում իրավունք չունեին բողոքարկելու: Չկար քաղաքացիություն չունենալու հանգամանքը որոշելու հստակ ընթացակարգ, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները կարգավորող ներպետական օրենսդրություն:

Մաս 3. Քաղաքական գործընթացին մասնակցելու ազատություն

Չնայած սահմանադրությամբ և օրենքներով քաղաքացիներին տրված է խաղաղ եղանակով իշխանությունը փոխելու հնարավորություն, հիմնվելով համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի վրա, ~~սակայն~~ իշխանությունները շարունակել են միջամտել այդ հնարավորության իրացմանը, ինչպես ընտրությունների ընթացքում, այնպես էլ ընտրություններից հետո իշխող ՀՀԿ-ի գերակայությունը երաշխավորելու նպատակով նախագծված հատուկ գործելակերպերի միջոցով:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Վերջին ընտրությունները. Երկրում 2013թ. անց են կացվել նախագահական, իսկ 2012թ.՝ խորհրդարանական ընտրություններ: Ըստ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), նախագահական ընտրությունները եղել են լավ կազմակերպված, բայցև ունեցել են թերություններ, այդ թվում՝ ոչ հավասար խաղի պայմաններ, քվեարկության օրը գրանցված որոշ լուրջ խախտումներ և ընտրական գործընթացի ամբողջականության (բարեվարքության) վերաբերյալ մտահոգություններ: Նմանատիպ թերությունները ստվեր էին նետել նաև 2012թ. Ազգային ժողովի ընտրությունների վրա, որոնցում չնայած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից նշված բարելավումներին, եղել են արժանահավատ մեղադրանքներ՝ ձայների գնման, բողոքների և բողոքարկման գործընթացի, ինչպես նաև

Ընտրական օրենսգրքի շարունակական թերությունների վերաբերյալ: Քաղաքացիական իշխանություններն արդյունավետ վերահսկողություն են պահպանել անվտանգության ուժերի նկատմամբ: .

Նախագահի նախաձեռնությամբ դեկտեմբերի 6-ին Սահմանադրության մեջ լուրջ փոփոխություններ, այդ թվում՝ կառավարության կիսանախագահական մոդելը խորհրդարանականով փոխելու կապակցությամբ տեղի ունեցավ քաղաքացիների հանրաքվե: Հանրության զգալի մասը, ինչպես նաև քաղաքացիական կազմակերպությունները մտահոգություն հայտնեցին փոփոխությունների աշխատանքային առաջարկների նախագծի, Ազգային ժողովի կողմից դրանց հաստատման և ընդունման վերաբերյալ: Չնայած հայեցակարգն ի սկզբանե հրատարակվել էր 2014 թ-ին, սակայն առաջին ամբողջական նախագիծը չէր հրապարակվել մինչև 2015թ.-ի օգոստոսը: Նոր նախագիծն էական փոփոխություններով խորհրդարանին էր ներկայացվել հոկտեմբերի 5-ին, և խորհրդարանականները ընդամենը մեկ ժամվա ընթացքում ստիպված էին եղել դիտարկել փաթեթը՝ մինչեւ վերջնական քվեարկությունը:

Քաղաքացիական հասարակական բազմաթիվ կազմակերպություններ և որոշ ընդդիմադիր քաղաքական ուժեր վիճարկել են սահմանադրական փոփոխությունները, քանի որ այն չէր անդրադարձել հասարակության և ոչ մի պահանջին, այլ ընդհակառակը, ջանքեր էր գործադրել երկարացնելու երկրի գործող իշխող կուսակցության իշխանությունը:

Ընտրողների անձը հաստատող փաստաթղթերի ուշացած փոփոխության ընդունումը վիճելի էր: Հանրաքվեից մոտավորապես մեկ ամիս առաջ, իշխող Հանրապետական կուսակցությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել էր քվեարկելիս, որպես ինքնության ապացույց, կառավարության կողմից տրված նույնականացման քարտերի օգտագործման խորհրդարանական օրինականացման հաստատումը: Իշխանությունները պնդում էին, որ այս նպատակի համար փաստաթղթերի վավերացման ձախողումը կարող է ընտրական իրավունքից զրկել ավելի քան 180.000 մարդու: Քաղաքացիական հասարակական և քաղաքական ընդդիմադիր խմբերը ընդունելով նման

առավելությունը, այնուամենայնիվ հարցականի տակ էին դնում ընտրատեղամասերում քարտերի ընդունման վերջին պահի որոշումը: Ըստ քննադատների պնդումների՝ քարտերում կրողի հասցեի բացակայությունը և քվեարկության ժամանակ օգտագործվելուց հետո դրանց չդրոշմակնքվելը հեշտացրել են բազմակի քվեարկությունները: Քննադատները մատնանշում են նաև հանրային փոքր վստահության առկայությունը, երկրի ընտրողների ցուցակների և համընդհանուր ընտրությունների կազմակերպման, ինչպես նաև նախորդ ընտրությունների ժամանակ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդների արձանագրած թերություններին չանդրադառնալու փաստը:

Սահմանադրական հանրաքվեն խաղաղ էր, սակայն կային բազմաթիվ արժանահավատ լրատվամիջոցների տարածած տեղեկություններ պետական հատվածի պաշտոնյաների աշխատակիցների ի հօգուտ հանրաքվեի քվեարկելու սպառնալիքների և ճնշումների վերաբերյալ: Ազգային և մարզային բարձրաստիճան պաշտոնյաները առաջնորդել և կառավարել էին «Այո» քարոզարշավը: Թեպետ օրինական, այնուամենայնիվ այս բարձր մակարդակի մասնակցությունը ստեղծել էր տպավորություն, որ իրենց գործընթացն առաջ տանելու համար համախոհերին հասանելի են եղել պետական և կառավարական միջոցները: Ներհանրապետական դիտորդները և լրատվամիջոցները, դեկտեմբերի 6-ի հանրաքվեի ժամանակ, հաղորդել են բազմաթիվ խախտումների մասին, այդ թվում՝ քվեատուփերի լցոնման, քվեաթերթիկների փոխարինման, ձայների գնման, նույն ֆիզիկական անձանց կողմից բազմակի քվեարկությունների, ուրիշի փոխարեն քվեարկելու, ինչպես նաև դիտորդների, լրագրողների և հանձնաժողովի անդամների հետապնդումների ու ահաբեկումների մասին: Դեկտեմբերի 10-ին, Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը հնարավոր ընտրախախտումների վերաբերյալ նամակ էր հղել ՀՀ գլխավոր դատախազին՝ վկայակոչելով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում ստացված 67 ահազանգերը: Ներհանրապետական դիտորդական առաքելությունները նույնպես գանգատներ էին ներկայացրել տնօրինող վարչական մարմիններին: Շատ քաղաքացիական հասարակական կազմակերպություններ և դիտորդական խմբեր բողոքների ընթացակարգը համարում են

իրավաբանորեն անարդյունավետ և ենթադրում են, որ ընտրական հանձնաժողովի անդամները միտումնավոր խոչընդոտել են բողոքներին:

«Հայ ազգային կոնգրես» ընդդիմադիր քաղաքական կուսակցությունը հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովից պահանջել էր բողոքարկել (անվավեր հայտարարել) հանրաքվեն՝ հղում անելով բազմաթիվ խախտումները և կասկածի տակ առնելով նախնական արդյունքները: Հանձնաժողովը որոշել էր, որ խախտումները չեն ազդել հանրաքվեի արդյունքների վրա և սահմանադրական փոփոխությունները հայտարարել էր ընդունելի հիմնվելով մոտ 51 տոկոս մասնակցության ու հոգուտ փոփոխությունների քվեարկած մոտավորապես 63 տոկոս ձայների վրա:

<u>Քաղաքական կուսակցությունները և քաղաքական մասնակցություն.</u> Թեպետ քաղաքական կուսակցությունների գրանցման կամ գործունեության հետ կապված անհարկի իրավական սահմանափակումների մասին հաղորդումներ չեն եղել, սակայն իշխանությունները քաղաքական բազմակարծությունը ճնշել են այլ ձևերով: Ընթացիկ տարվա սկզբին, կառավարության առաջարկած սահմանադրական փոփոխությունների դեմ մի խումբ ընդդիմադիր ուժերի նախաձեռնած բողոքի ցույցերը մեծ թափ էին ստանում: Ազգային ժողովի անդամ, և երկրորդ ամենամեծ քաղաքական խմբակցության՝ Բարգավաճ Հայաստանի նախագահ, հայտնի հարուստ գործարար (մագնատ) Գագիկ Ծառուկյանը բողոքի այդ ցույցերի կենտրոնում էր: Կայանալիք մեծ հանրահավաքից մեկ շաբաթ առաջ, Նախագահ Սարգսյանը, որը նաև իշխող ՀՀԿ-ի նախագահն է, ազգային հեռուստատեսությամբ հրապարակայնորեն սաստեց Ծառուկյանին, հեռացրեց նրան Ազգային անվտանգության խորհրդից՝ իրավասու մարմիններին հանձնարարելով քննել նախկինում նրա դեմ առաջադրված հանցագործ մեղադրանքներն ու հարկային վճարումների հետ կապված իրադարձությունները, ակնարկելով, որ նա կարող է նաև վտարվել Ազգային ժողովից:

Բազմաթիվ դիտորդների կողմից Սարգսյանի ելույթի հեռարձակումը և դրան հաջորդած իրադարձությունները, նկարագրվում էին, որպես երկրի

առավել կենսունակ ընդդիմադիր ուժի մեթոդական ապամոնտաժում: Բարգավաճ Հայաստանի մի շարք անդամներ և տեղական ղեկավարներ կառավարության ճնշման զանազան ձևերի, այդ թվում՝ աուդիտների ու հարկային տեսուչների ոտնձգությունների արդյունքում լքեցին կուսակցությունը: Ծառուկյանը, որպես Բարգավաճ Հայաստանի նախագահ և Ազգային ժողովում կուսակցության խմբակցության ղեկավար, գործադրված ճնշումից քիչ հետո ներկայացրեց իր հրաժարականն ու հայտարարեց քաղաքական կյանքից հեռանալու իր որոշման մասին: Զեկույցներում նշվել է, որ բիզնեսների ու ԲՀԿ կողմնակիցների հադեպ ոտնձգությունները դրանից հետո շուտով դադարել են, և նախագահ Սարգսյանը հանրության առջև հայտնվել էր Ծառուկյանի կողքին: Շատ դիտորդներ համարում են այդ միջոցները հանրային ահաբեկման դեպքեր և օրենքի ընտրովի կիրառում՝ ճնշելու ընդդիմության առաջնորդի, որն ունակ էր ժողովրդի մեծ թվով ընդդիմություն համախմբելու և ոտքի հանելու ընդդեմ երկրի ղեկավարի:

Շարունակվում են դժգոհություններ այն մասին, որ իշխանություններն օգտագործել են իրենց զգալի վարչական և իրավական ռեսուրսները, որպեսզի կանխեն ընդդիմադիր կուսակցություններին ուղղորդվող ֆինանսական հատկացումները՝ այդպիսով սահմանափակելով այդ կուսակցությունների գործունեությունը: Պետական միջոցներից կամ հնարավոր դոնորների վրա կառավարության ճնշումների հետևանքով մասնավոր նվիրատվությունների միջոցով ֆինանսներ հայթայթելու ընդդիմադիր կուսակցությունների անկարողության պատճառով ընդդիմադիր կուսակցությունների մեկուսացումն ավելի է խորացել: Քաղաքացիական հասարակական կազմակերպությունները հայտնում են ընտրարշավների ընթացքում ու քվեարկության օրերին կառավարական ռեսուրսների չարաշահման մասին, այդ թվում՝ սպառնալիքներ գործող պաշտոնյայի օգտին չքվեարկելու դեպքում ընտանիքին սոցիալական նպաստից կամ ուսանողներին ուսման վարձի արտոնություններից զրկելու վերաբերյալ:

Իշխող կուսակցության հետ կապերը թույլ են տվել պահպանել աշխատանքն ու աշխատանքային առաջխաղացում ունենալ թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածներում: Տեղական դիտորդների

կողմից եղել են բազմաթիվ զեկույցներ այն մասին, որ որոշ համայնքապետեր, որոնք առաջադրվել են որպես անկախ թեկնածուներ, ընտրվելուց հետո անդամագրվել են Հանրապետական կուսակցությանը կամ դարձել են կուսակցությանը հավատարիմ անձնավորություն, որովհետև այլ կերպ չէին կարողանա արդյունավետ կերպով իրականացնել իրենց աշխատանքը: Քանի որ համայնքները մասամբ կախման մեջ են գտնվում պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից, այդ հաղորդումներում ակնարկվում էր, որ պետական բյուջեից համայնքապետի ստացած աջակցության մակարդակը պայմանավորված էր համայնքապետի կուսակցական պատկանելությամբ: Նույն կերպ, պետական դպրոցներում, բուհերում, բուժհաստատություններում ու այլ հիմնարկություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու կամ պետական ֆինանսավորմամբ հաստատություններում ռեսուրսներ ստանալու համար պետք է լինել կա՛մ Հանրապետական կուսակցության անդամ, կա՛մ կուսակցությանը հավատարիմ անձնավորություն: Ըստ լրատվամիջոցների ու այլ հաղորդումների բուհերի ուսանողական խորհուրդները մեծապես ղեկավարվում են Հանրապետական կուսակցության երիտասարդական թևի անդամների կողմից, իսկ իշխանական կուսակցության անդամ կամ հավատարիմ անձնավորություն դառնալն ապահովում է ավելի բարձր գնահատականներ, ուսման վարձի արտոնություններ և այլ տիպի բարեհաճություններ: Իշխանական կուսակցությունն ու վերջինիս թեկնածուները ենթադրաբար չարաշահել են վարչական ռեսուրսը պետական և որոշ մասնավոր աշխատավայրերում աշխատողներին ահաբեկելու ու նրանց օժանդակությունը ստանալու համար:

Եղել են դժգոհություններ, որ կապեր ունեցող գործարարներն իրենց շահույթից որոշակի մաս ուղղել են իշխող կուսակցությանը կամ իշխող քաղաքական վերնախավի հետ կապ ունեցող այլ կուսակցություններին՝ հարկեր չվճարելու կամ հարկման մեղմ դաշտում հայտնվելու տեսքով անարդար տնտեսական առավելություններ ստանալու դիմաց: Եղել են նաև պնդումներ, որ աշխատանքի ընդունման որոշումներում իշխանությունները խտրական վերաբերմունք են հանդես բերել ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների անդամների նկատմամբ:

Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը. Հասարակության ուժեղ հիերարխիկ ու հայրապետական բնույթը արգելում է կանանց մասնակցությունը քաղաքական կյանքում և որոշումներ կայացնող հասարակական ոլորտի պաշտոններում: Տարեվերջի դրությամբ 131 պատգամավոր ունեցող Ազգային ժողովում կար միայն13 կին պատգամավոր, կառավարությունում՝ 18 նախարարներից միայն երեքն էին կին, իսկ երկրի 10 մարզերից ոչ մեկի մարզպետը կին չէր: Երևանի ավագանու 65 ընտրված անդամներից միայն տասն էին կանայք, և ոչ մի կին ղեկավար Երևանի 12 վարչական համայնքներում:

Մաս 4. Կոռուպցիան և կառավարման թափանցիկության բացակայություն.

Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ, սակայն կառավարությունն օրենքն արդյունավետորեն չի կիրառել, և շատ պաշտոնյաներ անպատժելիորեն ներգրավված են եղել կոռուպցիոն գործողությունների մեջ: Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ հաղորդումներ պետական կոռուպցիայի վերաբերյալ: Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության 2014-15թթ.թ.զեկույցի, ամենահայտնի խնդրահարույց գործոնը երկրում գործարարությամբ զբաղվելու համար եղել է կոռուպցիան: Freedom House-ի՝ *Պետություններ անցումային շրջանում* 2014-15 *թ.թ.* զեկույցում նշվել է, որ չնայած որոշ բարելավումների, կոռուպցիան մնացել է ընդգրկուն, ընդ որում կաշառակերությունն ու հովանավորչությունը շատ հաճախ են նկատվում կառավարական պաշտոնյաների մոտ, որոնք հազվադեպ են դատական կարգով հետապնդման ենթարկվում կամ պաշտոնը չարաշահելու համար հեռացվում աշխատանքից:

Կոռուպցիա. Թեև սահմանադրությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց արգելվում է պետական պաշտոն զբաղեցնել, սակայն գործարարները շարունակել են տեղեր զբաղեցնել Ազգային ժողովում, իսկ պետական տարբեր պաշտոնյաներ շարունակել են օգտագործել իրենց պաշտոններն ի նպաստ իրենց սեփական գործարար շահերի: Դիտորդներից շատերի գնահատմամբ,

կառավարության հետ կապված կամ պետական պաշտոններ զբաղեցնող օլիգարխները տնտեսությունը մենաշնորհային են դարձրել: Կոռուպցիայի հարցերով զբաղվող քաղաքացիական խմբերը նշում էին, որ իշխանությունները շարունակել են անտեսել լրատվական ու այլ հաղորդումները, որոնք առնչվում էին պետական պաշտոնյաների կոռումպացված գործունեությանը, վերաբերմունք, որ խաթարում էր հանրության վստահությունը: Իշխանությունները չեն ունեցել հակակոռուպցիոն օրենսդրությունը կիրառելու կամք: Համաձայն էթիկայի կանոնների, շատ պետական պաշտոնյաներ բացահայտել են անհասկանալի եկամուտների և ակտիվների մեծ գումարներ, սակայն իշխանությունները չեն կարողացել վկայակոչել հակակոռուպցիոն օրենքները կամ քննել այդպիսի հայտարարագրերը:

Եղել են բազմաթիվ հաղորդումներ պետական համակարգային կոռուպցիայի վերաբերյալ գործունեության այնպիսի ուղղություններում, ինչպիսիք են՝ քաղաքային սպասարկման աշխատանքները, շինարարությունը, հանրային վարչարարությունը, դատական համակարգը, պետական գնումներն ու աճուրդները, առողջապահությունը, հարկերը, իրավապահ և զինվորական անձնակազմը: Եղել են հաղորդումներ պետական միջոցների յուրացման, կասկածելի բիզնես գործարքներում պետական պաշտոնյաների ներգրավման, կառավարության հետ կապեր ունեցող ընկերություններին հարկային արտոնություններ տալու մասին:

Մայիսի էլեկտրաէներգիայի գների բարձրացման հայտարարությանը հաջորդեցին Հայաստանի էլեկտրական ցանցերի (ՀԷՑ) ղեկավարության ֆինանսական տեղեկատվության հրապարակումները ՀԷՑ-ի կայքում: Այս զեկույցը և բազմաթիվ լրատվամիջոցների հաղորդագրությունները լույս սփռցին ՀԷՑ-ի ծախսերի գործելակերպի վրա, որն ընդգրկում էր պաշտոնական օգտագործման համար գնված ու վարձակալված ճոխ տներ, բնակարաններ ու ավտոմեքենաներ, ինչպես նաև մի պետական կրթական հիմնադրամի և վարչապետի հովանավորությամբ եկեղեցի կառուցելու նպատակով կատարված նվիրատվություններ:

Հունիսին, հանրության բողոքին հաջորդեց ՀԷՑ-ի նախագահական արտաքին աուդիտի հանձնարարականը, որը սեպտեմբերին դեռևս ընթացքի մեջ էր, և որտեղ ասվում էր, որ մինչև աուդիտի արդյունքների պատրաստ լինելը կառավարությունը պետք է սուբսիդավորի փոքր տնային տնտեսությունների հին և նոր սակագների տարբերությունը: Սեպտեմբերի 17-ին, կառավարությունը որոշել էր վերանայել ՀԷՑ-ի վաճառքի վերաբերյալ առաջարկությունը օֆշորում գրանցված մի ընկերությանը, որը պատկանում էր մի ռուսաստանահայ մեծահարուստ գործարարի:

ՀՀ գլխավոր դատախազը պատասխանատու էր կոռուպցիայի դատական կարգով հետաքննության իրականացման համար, իսկ կոռուպցիայի քննությունը պետք է կատարվեր Հայաստանի Հանրապետության նորաստեղծ քննչական կոմիտեի (ՀՀՔԿ) կողմից: Ըստ լայն տարածում ստացած հաղորդումների, այս կառույցներից ոչ մեկն արդյունավետ կամ անկախ չի գործել, և ոչ մեկը չի ունեցել բավարար ռեսուրսներ: ՀՀՔԿ-ի ղեկավար է նշանակվել նախկին գլխավոր դատախազը, ինչը քաղաքական հանրության անդամներին ստիպել է հարցականի տակ դնել կազմակերպության անկախությունը:

<u>Եկամուտների ու գույքի հայտարարագրում.</u> Օրենքով պահանջվում է, որ բոլոր բարձրաստիճան պետական պաշտոնյաները և նրանց ընտանիքի անդամները տարեկան կտրվածքով ներկայացնեն գույքի և եկամուտների հայտարարագրեր: Օրենքի համաձայն Անհամապատասխանության կամ կեղծ հայտարարագրեր ներկայացնելու համար գոյություն ունեն վարչական տուգանքներ, սակայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը հավաքել և դիտարկել է հայտարարագրերի ներկայացումը, բայց չունի դրանց արժանահավատությունը ստուգելու կամ կեղծ տվյալներ ներկայացնելու համար պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու իրավասություն: Ընթացիկ տարվա ընթացքում մի քանի դատավորներ, ինչպես նաև գլխավոր դատախազը և այլ պաշտոնյաներ, որպես եկամուտ հազարավոր դոլարների արժողությամբ նվերներ են հայտարագրել, սակայն պետական ոչ մի մարմին չի հետաքննել այդ նվերների աղբյուրները:

Տեղեկությունների հասանելությունը հանրությանը: Թեև օրենքը սահմանում է պաշտոնական տեղեկատվության հանրային հասանելիություն, սակայն որոշ պետական կառույցներ և պաշտոնյաներ չեն կամեցել ապահովել այն: Ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպության և Թրանսփերենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ամենամեծ մարտահրավերն այն էր, որ պետական մարմինները, որոնք ինֆորմացիայի ազատության պահանջը բավարարելու տպավորություն էին ստեղծում, այնպիսի պատասխաններ էին տալիս, որոնք կամ տեղին չէին, կամ էլ ոչ լիարժեք: Արդյունքում, ընթացիկ տարում հասարակական կազմակերպություններն ավելի քիչ հաջողակ են եղել հետամտելու տեղատվական ազատության դեպքերը դատարաններում, քան նախորդ տարիներին, քանի որ դատավորները մերժել են հայցերն այն հիմնավորմամբ, որ պետական կառույցներն արդեն տրամադրել են պատասխանները՝ անկախ դրանց բովանդակությունից:

Համաձայն օրենքի, ՀՀ կառավարությունը որպես կապի միջոցներ բոլոր նախարարությունների և մարզպետների գրասենյակներում նշանակել է ազատության տեղեկատվության պաշտոնյաներ: Այդ պաշտոնյաների արդյունավետության մասին Տեղեկությունը հասանելի չէր: Հոկտեմբերի 15-ին, կառավարությունը որդեգրել է 2003 թ-ի. Տեղեկատվության ազատության օրենքի կանոնակարգի իրականացումը, քանի որ պաշտոնյաները նախկինում հարցումները մերժելիս մեջ էին բերում նման կանոնակարգերի բացակայությունը:

Մաս 5. Կառավարության վերաբերմունքը միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների հայտարարվող խախտումների քննության վերաբերյալ.

Մարդու իրավունքների ոլորտի մի շարք տեղական և միջազգային խմբեր, ընդհանուր առմամբ, գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ ազատորեն հետաքննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Չնայած պետական պաշտոնյաները երբեմն

արձագանքել են նրանց կարծիքներին և համագործակցել, ժամանակ առ ժամանակ եղել են նաև ակտիվիստների հետապնդումներ:

Իշխանության իրավասու մարմինները հիմնականում համաձայնել են հանդիպել տեղական հասարակական կազմակերպությունների դիտորդների հետ և հետևել են որոշ հասարակական կազմակերպությունների առաջարկներին, մասնավորապես սոցիալական, կրթական ու տեղական խնդիրներին առնչվող հարցերում: Միաժամանակ, նրանք սովորաբար զգալի միջոցներ չեն ձեռնարկել՝ արձագանքելու իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի ու չարաշահումների դրսևորումների վերաբերյալ հասարակական կազմակերպությունների հնչեցրած մեղադրանքներին: Իրավասու մարմինների սովորական արձագանքը նմանատիպ դեպքերում եղել է այն, որ քննություն է իրականացվել, սակայն մեղադրանքները չեն հիմնավորվել:

Իրավասու մարմինների կողմից երբեմն եղել են հետապնդումներ մարդու իրավունքների խմբերի, քաղաքացիների և քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ, ովքեր տարվա ընթացքում մասնակցել են կառավարության ձեռնարկած միջոցների կամ քաղաքականության դեմ ուղղված բողոքի խաղաղ ցույցերի, այդ թվում՝ պատմական մի շենքի քանդման, կայանատեղերի ու վարորդների տուգանքների, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման և կենսաթոշակային հարցերի դեմ: Լրատվամիջոցներում զեկույցները շարունակվել են այն մասին, որ ոստիկանությունն այցելել ու խուզարկություններ է անցկացրել ակտիվիստների տներում՝ կասկածելի հիմնավորումներով:

Տարվա ընթացքում իրավապաշտպան կազմակերպությունները և լրատվական միջոցները զեկուցել են իրավապաշտպան Մարինա Պողոսյանի դեմ շարունակական ոտնձգությունների և սպառնալիքների մասին: Պողոսյանի «Վելես» իրավապաշտպան ՀԿ-ն իրավաբանական աջակցությունն էր տրամադրել ենթադրաբար կառավարության հետ կապ ունեցող դրամական վարկատուների զոհերին: Հոկտեմբերի 5-ին, 11 իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների միությունը՝ Երևանի Մարդու իրավունքների տունը հանդես է եկել

հայտարարությամբ, պնդելով, որ 2014թ. V «Վելես» -ի ստեղծման օրվանից ի վեր Պողոսյանն ու նրա կազմակերպությունը եղել են ճնշման տակ: 2014 թ. մայիսին նախկին պետական պաշտոնյա Հովհաննես Երիցյանի հայտարարությամբ դրամաշորթության մեղադրանքով քրեական հետաքննություն էր հարուցվել Պողոսյանի դեմ՝ վերջինիս մեղադրելով դրամական վարկավորման մեջ ներգրավված լինելու մեջ: Թեպետ, իրավապահ մարմինները կարճել էին Պողոսյանի հետաքննությունը, ՀՀՔԿ-ն էլ իր հերթին կեղծ մեղադրանքներ ներկայացնելու համար կարճել էր Պողոսյանի հարուցած գործն ընդդեմ Երիցյանի: Հուլիսի 29-ին առաջին ատյանի դատարանը բավարարել էր Պողոսյանի վերաքննիչ դատարանի բողոքը, վճռելով, որ ՀՀՔԿ-ը պարտավոր է կրկին բացել գործը, քանի որ վերջիններս չէին անցկացնել մանրակրկիտ և օբյեկտիվ քննություն: Սակայն, այդ նույն օրը, կոմիտեն տեղեկացրել էր Պողոսյանին, որ նրան հետաքննում են խարդախության համար: Ըստ հաղորդումների ՀՀՔԿ-ի կողմից եղել էին նաև բազմաթիվ սպառնալիքներ Պողոսյանի նկատմամբ: Հիշեցնենք, որ օգոստոսի 9-ին, անհայտ անձինք փորձել են հրկիզել նրա գրասենյակի էլեկտրական մալուխները: Օգոստոսի 11-ին, ըստ հայտարարության, անհայտ հիմունքներով ոստիկանությունը առգրավվել է նրա մեքենան:

Որոշ պետական գործիչներ ու կառավարամետ լրատվամիջոցներ օտարերկրյա ֆինանսավորում ստացող հասարակական կազմակերպություններին, այդ թվում հայտնի իրավապաշտպան խմբերին ու կոռուպցիայի հարցերով զբաղվող դիտորդներին, որակել են որպես «գրանտակերներ» և դավաճաններ, ովքեր վտանգում են ազգային շահերը, անվտանգությունը և ավանդույթները:

<u>Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները.</u>
Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակը պատասխանատու է բոլոր մակարդակներում մարդու իրավունքների ու հիմնարար ազատություններիկառավարման համար: Տարվա ընթացքում պաշտպանը հրապարակել է ինչպես թեմատիկ, այնպես էլ հերթական զեկույցներ մարդու իրավունքներին վերաբերող հարցերի շուրջ: Պաշտպանի գործունեության արդյունավետությունը երբեմն սահմանափակված է եղել սուղ ռեսուրսների պատճառով:

Մաս 6. Խտրականություն, հասարակական չարաշահումներ և մարդկանց թրաֆիքինգ

Սահմանադրությամբ արգելվում է սեռի, ռասայի, ազգային պատկանելիության, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, սոցիալական կարգավիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի և կամ անձնական ու սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիման վրա խտրականությունը: Գործնականում կառավարությունն այդ արգելքներն արդյունավետորեն չի կիրառել: 2014թ.հուլիսի 16-ի զեկույցում ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (CESCR) մտահոգություն էր հայտնել, որ չկա խտրականության դեմ ուղղված համընդգրկուն իրավական դաշտ, որը կապահովեր Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային կոնվենցիայով սահմանված խտրականության վերացման բոլոր հիմքերը:

Կանայք

<u>Բռնաբարություն և ընտանեկան բռնություններ</u>. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար սահմանված առավելագույն պատժաչափը 15-տարվա ազատազրկումն է՝ ամուսնական բռնաբարությունն իրավասու մարմինների կողմից հետապնդվում է բռնաբարության ընդհանուր հոդվածներով: Նույն կերպ, ընտանեկան բռնությունը պատժվում է բռնության ընդհանուր հոդվածներով:

Լայն տարածում ունեն ամուսինների ոտնձգությունները և կանանց դեմ բռնությունները: 2014թ.հուլիսի զեկույցում Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (CESCR) մտահոգություն էր հայտնել բռնության բարձր ցուցանիշների պահպանման վերաբերյալ, մասնավորապես կանանց դեմ ուղղված ընտանեկան բռնության մասով և ափսոսանք հայտնելով, որ չկար ընտանեկան բռնությունը քրեականացնող առանձին օրենք: Իշխանությունների կողմից

ընտանեկան բռնությունների մասով չի իրականացվում արդյունավետ քրեական հետապնդում:

Սոցիալական պիտակավորման, «տուժողի մեղավոր լինելու», ինչպես նաև կին ոստիկանների ու քննիչների բացակայության, ինչպես նաև երբեմն ոստիկանության կողմից քայլեր ձեռնարկելու դժկամության պատճառով, ամուսնական չարաշահումներն ու կանանց նկատմամբ բռնությունները հինականում շարունակվում են չզեկուցվել: Ըստ տեղական դիտորդների ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասի վերաբերյալ չեն եղել զեկուցումներ, որովհետև տուժողները վախեցել են ֆիզիկական վնասից, անհանգստացել են, որ ոստիկանությունը նրանց կվերադարձնի իրենց ամուսիններին, կամ ամաչել են ընտանեկան խնդիրներն ի ցույց դնելուց: Եղել են նաև հաղորդումներ, որ նման դեպքերում ոստիկանությունը դժկամություն է հանդես բերել ու չի խրախուսել կանանց բողոքներ ներկայացնել՝ հատկապես Երևանից դուրս: Ըստ գործող օրենսդրության ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը որակվել է որպես թեթև կամ միջին ծանրության գործեր: Նման դեպքերում տուժողը կարող է հրաժարվել մեղադրանք ներկայացնելուց, իսկ ընտանեկան բռնությունների մասին հաղորդող տուժողները հաճախ ճնշումների են ենթարկվել բռնություն գործադրողների կողմից, որպեսզի հետ վերցնեն բողոքը կամ փոխեն իրենց նախկին ցուցմունքը:

Ըստ ՀԿ Կանանց աջակցման կենտրոնի, որը գործարկում է թեժ գիծ ընտանեկան բռնության զոհերի համար, իրենց կողմից աջակցություն ստացած կանանցից շատերը վերապրել են ամուսնական բռնաբարություն: Երկրում գործող մեկ այլ ապաստարան տնօրինվում է Կանանց իրավունքների կենտրոնի կողմից: Երկու աջակցման կենտրոններն էլ ֆինանսավորվում են միջազգային հիմնադրամների կողմից, սակայն դրանցից ոչ մեկը չունի բավարար հնարավորություններ՝ բավարարելու տուժողների կարիքները:

Ըստ ԶԼՄ փորձագետների և կանանց իրավունքների հասարակական Կազմակերպությունների, տեղական արտադրության սերիալները, որոնք լայն լսարան ունեն և հաճախակի ցուցադրվում են բոլոր

հեռուստաալիքներով, հակված էին ամրապնդել գոյություն ունեցող վերաբերմունքն ու գենդերային կարծրատիպերը և լեգիտիմացնում էին կանանց դեմ բռնությունները:

Սեռական ոտնձգություններ: Օրենքը հստակորեն չի արգելում սեռական ոտնձգությունները, չնայած այն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին: Չնայած խնդրի ծավալների վերաբերյալ հրապարակային տվյալներ չկան, սակայն դիտորդները կարծում են, որ աշխատավայրում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեն:

Վերարտադրողական իրավունքներ: Օրենքը զույգերին և անհատներին իրավունք է տալիս առանց խտրականության, հարկադրանքի կամ բռնության ազատ որոշում կայացնել,թե երբ, ինչ պարբերականությամբ և քանի երեխա են ունենալու, և ունենալ միջոցներ և անհրաժեշտ տեղեկատվություն դրա համար: Երեխաների թվի ու երեխաների ծնվելու պարբերականության վերաբերյալ որոշումները սովորաբար ընդունվում են ամուսնու և նրա ծնողների կողմից: Մասնագիտական ծննդօգնությունն առավել հասանելի է մեծ քաղաքներում ու բնակելի կենտրոններում, որտեղ և գտնվում են ծննդատները: Եղել են հաղորդումներ, որ հատկապես գյուղական և հեռավոր բնակավայրերում կանանց համար չի ապահովվել ընդհանուր առողջապահական ու վերարտադրողական առողջության ծառայությունների բավարար հասանելիություն: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի (CESCR) 2014թ. հուլիսի իր զեկույցում, ՏՄՄԻԿ-ը մտահոգություն էր հայտնել հակաբեղմնավորիչների սահմանափակ առկայության վերաբերյալ:

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ սահմանված ընտանեկան, աշխատանքային, գույքի ու ժառանգության մասին օրենսդրությամբ և դատական համակարգում, սակայն գենդերային խտրականությունը դեռևս խնդրահարույց է, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում: Եղել են կանանց նկատմամբ խտրականության զեկույցներ զբաղվածության և աշխատանքի հետ կապված (տես բաժին 7.դ.): Կանայք, կառավարության

բոլոր ճյուղերում և բոլոր մակարդակներում մնում են ցածր ղեկավար պաշտոններում (տես բաժին 3):

ՏՍՄԻԿ-ն իր զեկույցում մտահոգություն էր հայտնել ընտանիքում ու հասարակության մեջ կանանց ու տղամարդկանց դերի վերաբերյալ արմատացած վերաբերմունքի ու կարծրատիպերի վերաբերյալ: Ըստ գենդերային հարցերով փորձագետների կրթական համակարգը բոլոր մակարդակներում ամրապնդել է այս մոտեցումները:

Սեռի կողմնակալ ընտրություն նախածննդյան փուլում. 2014թ.հուլիսի իր զեկույցում Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (CESCR) մտահոգություն էր հայտնել, որ նորածին տղաների թիվը նորածին աղջիկների թվի համեմատ երկրում շատ բարձր է: Կառավարությունը և խորհրդարանն աջակցել են երկրում սեռի նախածննդային ընտրության վերաբերյալ հետազոտությունների անցկացմանը, ինչպես նաև խնդրի շուրջ իրազեկման մեծացմանն ուղղված արշավներին: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից 2014 թ. մայիսին հրապարակված ամենավերջին հետազոտության տվյալներով երկրի տարբեր շրջաններում գրանցված ծնունդներում տղա-աղջիկ հարաբերակցությունն առաջնեկների շրջանում 111-124 տղայի դիմաց 100 աղջիկ էր, իսկ երկրորդ և հետագա երեխաների դեպքում 160 տղայի դիմաց 100 աղջիկ: Համաձայն EurasiaNet կայքի, հուլիսին Առողջապահության նախարարության մի պաշտոնյա հայտարարել էր, որ Աշխատանքի նախարարության և հասարակական կազմակերպությունների ներգրավվածությամբ ընթացակարգի մեջ է երկու տարի տևողությամբ մի ծրագիր՝ բարձրացնելու իրազեկությունը պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման վնասակար հետևանքների մասին:

Երեխաներ

Ծննդյան գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից, և ծննդյան գրանցումը ծնողների պարտավորությունն է: Ծննդյան վկայականը պետք է ներկայացվի հիվանդանոց՝ մինչև երեխայի հիվանդանոցից դուրս գրվելը: Ծննդյան վկայականի բացակայության

դեպքում մերժվում են հանրային ծառայությունները:

Կրթություն: Թեպետ կրթությունը պարտադիր է և անվճար մինչև իններորդ դասարան, սակայն գործնականում այն բոլորի համար հասանելի չէ: Ըստ ՄԱԿ-ի ՅՈՒՆԻՍԵՖ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) հաշմանդամություն ունեցող և սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները շարունակել են կանոնավոր կերպով բախվել անբարենպաստ իրավիճակների կապված դպրոցի հասանելիության և կրթական ծառայություններից շարունակաբար օգտվելու հետ (Ստորև տե՛ս՝ Հաշմանդամություն ունեցող անձիք): Ազգային փոքրամասնություն կազմող խմբերի, մասնավորապես՝ եզդիների, քրդերի ու մոլոկանների երեխաների շրջանում շատ ավելի ցածր է դպրոցի և դասերի ընդգրկվածության և հաճախելիության ցուցանիշը, և բարձր էր ութերորդ դասարանից հետո ուսումը կիսատ թողնելու ցուցանիշը: ՅՈՒՆԻՍԵՖ-ը մտահոգություն է հայտնել տեղական համայնքների հետ Սիրիայից, Իրաքից և Ուկրաինայից փախստական երեխաների աճող թվի ինտեգրվելու վերաբերյալ:

Երեխաների նկատմամբ բռնություն. Երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունների ամբողջական վիճակագրական տվյալներ չկան, թեև նման բռնությունները կարծես թե խնդրահարույց են հատկապես հաստատություններում և սոցիալապես անապահով ընտանիքներում: Ադրբեջանին սահմանակից տարածքներում ապրող երեխաները, դատապարտված են ապրել փոխհրաձգության տակ: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, երեխաների նկատմամբ կատարված բռնությունների պաշտոնական, միասնական վիճակագրական տվյալների բացակայությունը, սահմանափակում էր ազգային արձագանքման և կանխարգելման համապատասխան մեխանիզմներ մշակելու՝ կառավարության կարողությունը: : Բռնությունների զոհ դարձած երեխաների համար չկա պաշտոնական ուղղորդման որևէ համակարգ, և բացի բժիշկներից երեխաների հետ աշխատող մյուս մասնագետների համար ուղղորդումը պարտադիր չէ:

Կանանց ռեսուրսային կենտրոնը նշել էր անչափահաս աղջիկների և տղաների նկատմամբ սեռական բռնության աճի դեպքերի մասին:

Կենտրոնը նաև հաղորդել էր այն դեպքերի մասին, երբ երիտասարդ զոհերին խարանել ու ծաղրել են իրենց համայնքներում, և անգամ հեռացրել դպրոցից:

Վաղ և հարկադիր ամուսնություն: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներով, երեխաների (տղաների և աղջիկների) միջին հաշվով 7.2 տոկոսն ամուսնացել է մինչև18 տարեկանը: Աղջիկների վաղ ամուսնությունը ավելի հաճախակի է եզդի համայնքներում, սակայն կառավարությունը միջոցներ չի ձեռնարկել սակայն կառավարությունը միջոցներ չի ձեռնարկել դրան անդրադառնալու կամ ծավալները արձանագրելու ուղղությամբ:

Երեխաների սեռական շահագործում. Հակաթրաֆիքինգի օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը և խախտումների դեպքում սահմանվում է 7-15 տարվա ազատազրկում՝ կախված ծանրացուցիչ հանգամանքների առկայությունից: Մանկական պոռնկագրությունը պատժվում է մինչև յոթ տարի ազատազրկմամբ: Սեռական համաձայնության տարիք է համարվում 16 տարին:

Երեխաների խնամքի հաստատություններ.
2014թ.թ.հուլիսյան իր զեկույցում ՏՍՄԻԿ-ն նշվում էր, որ չնայած խնամքի հաստատությունների բեռնաթափմանն ուղղված կառավարության ծրագրին, շարունակում էր բարձր մնալ խնամքի հաստատություններում գտնվող երեխաների ցուցանիշը, ընդ որում այդ երեխաների գերակշիռ մասն ունեն ողջ ազգականներ: Կոմիտեն նշում էր այն դեպքերի մասին, երբ ծնողները պահպանում են իրենց ծնողական իրավունքները, սակայն երեխաներին տեղավորում են գիշերօթիկ դպրոցներում կամ մանկատներում՝ ելնելով տնտեսական դժվարություններից և այն հանգամանքից, որ անկարող են հոգալ երեխայի հիմնական կարիքների բավարարմանն ուղղված ծախսերը: Կոմիտեն նաև մտահոգություն էր հայտնում, որ երեխաները մարմնական պատիժներից պաշտպանված չեն:

Համաձայն նոյեմբեր ամսվա լրատվամիջոցների հաղորդման, ՌԱՄԿ-ը ավարտին է հասցրել Բյուրեղավանի գիշերօթիկ դպրոցի

խարդախության, յուրացումների և երեխաների հանդեպ ոտնձգությունների հետաքննությունը: Հանձնաժողովը մեղադրել է դպրոցի նախկին տնօրեն Գայանե Մարգարյանին և նրա հանցակիցներին հատկապես 2004-14թթ. խոշոր գումարներ յուրացնելու և 14 աշակերտների բռնության ենթարկելու մեջ:

Կառավարությունը շարունակում էր գործարկել 37 խնամքի հաստատություններ, որտեղ բնակվում էին 4000-ից ավելի երեխաներ, ընդ որում երեխաների մեծամասնությունն առնվազն մեկ ողջ ծնող ունեին: Փորձագետները հավատացած էին, որ բեռնաթափմանը խոչընդոտող հիմնական գործոնը կոռուպցիան էր, քանի որ խնամքի հաստատություններին տրամադրվող պետական ֆինանսավորման չափը պայմանավորված է հաստատությունում գտնվող երեխաների թվով: Երեխաների խնամատար հաստատությունները օժանդակելու համար կառավարությունը տարեկան միջին հաշվով ծախսել էր ավելի քան $ 13 մլն:

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և այլ դիտորդների, հաստատություններում գտնվող երեխաները հասակակիցների և անձնակազմի կողմից ենթարկվում են ֆիզիկական և հոգեբանական բռնության: ՅՈՒՆԻՍԵՖ-ը պետական մարմիններին տեղեկացրել էր սննդի և առողջապահական չափանիշների բազմաթիվ խախտումների մասին, սակայն իշխանությունները տարվա ընթացում միայն մի քանի բարելավումներ են կատարել: Տարվա ընթացքում ՅՈՒՆԻՍԵՖ-ը և հասարակական կազմակերպությունները, օգտագործելով օտարերկրյա ֆինանսավորումը, սկսել են աշխատել՝ նվազեցնելու երեխաների թիվը հաստատություններում, և հաստատելու՝ համայնքային, ընտանեկան հիմունքների վրա հիմնված այլընտրանքային տարբերակներ, ինչպես նաև ներառական դպրոցներ՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար:

Երեխաների միջազգային առևանգումներ: Երկիրն անդամակցում է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային: Տեղեկությունների համար տես Պետքարտուղարության համապատասխանության վերաբերյալ զեկույցը՝ travel.state.gov/content/childabduction/en/legal/compliance.html կայքում,

իսկ երկրի մասին հատուկ տեղեկատվությունը տես՝
travel.state.gov/content/childabduction/en/country/Armenia.html.կայքում

Հակասեմականություն

Ըստ դիտորդների երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 մարդ: Տարվա ընթացքում հակասեմական գործողությունների մասին հաղորդումներ չեն եղել:

Մարդկանց թրաֆիքինգ

Տես՝ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիկինգի մասին զեկույցը www.state.gov/j/tip/rls/tiprpt/ կայքում:

Հաշմանդամ անձիք

Օրենքով արգելվում է որևէ տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, սակայն խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ նոր և վերակառուցվող շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սակայն գործնականում շատ քիչ շենքեր կամ այլ՝ անգամ նոր կառուցված կամ վերանորոգված հաստատություններ, են հասանելի եղել նրանց համար: Հաշմանդամների իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որն արդյունավետ կերպով չի իրականացրել իր այս գործառույթը:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ հազվադեպ են տնից դուրս գալիս՝ հաշմանդամության նկատմամբ սոցիալական խարանի պատճառով: Ըստ 2012 թ.ՅՈՒՆԻՍԵՖ-ի անցկացրած հարցման, հաշմանդամություն ունեցող երեխաների հինգից մեկը չի հաճախել դպրոց: Երբեմն

հաշմանդամություն ունեցող երեխաները դպրոց չեն հաճախում մի կողմից ցուցաբերվող խտրականության, մյուս կողմից էլ դպրոցներում նրանց կարիքներին համապատասխան հարմարությունների բացակայության պատճառով: ՅՈՒՆԻՍԵՖ-ի պատվերով անցկացված հետազոտության տվյալներով, որը հրապարակվել էր 2014 թ., բնակչության մոտ մեկ երրորդը կարծում էր, որ մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին պետք է հասարակությունից մեկուսացնել: Հաշմանդամ աղջիկների դպրոցից դուրս մնալն ավելի հավանական է, քան տղաներինը, և բացի այդ, գենդերային անհավասարությունն առավել տարածված է մայրաքաղաքից դուրս: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի (CESCR) հուլիսյան զեկույցում նշվում էր, որ հաշմանդամություն ունեցող երեխաների 18 տոկոսի համար հանրակրթությունը հասանելի չէր: Կոմիտեն նշում էր, որ չնայած ներառական դպրոցների ցանցի մեծացմանն ուղղված պետության ջանքերին, պաշտոնյաներն այդ քաղաքականությունն ամբողջովին չէին իրագործում: Հունվարի 3-ին ուժի մեջ է մտել հանրային կրթության օրենքի փոփոխությունը, որով պահանջվում է, որ մինչև 2025թ. բոլոր հանրակրթական դպրոցները դառնան ներառական.

2012թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից անցկացված հետազոտության տվյալներով յուրաքանչյուր 8 հաշմանդամ երեխայից մեկը տեղավորված էր հատուկ հաստատություններում (մանկատներում կամ հատուկ գիշերօթիկ դպրոցներում: Եղել են դեպքեր, երբ ծնողները լքել են հաշմանդամ երեխաներին, այդ թվում երեխայի ծնվելուց հետո՝ հաճախ բժշկական անձնակազմի խորհրդով կամ ընտանիքի մյուս անդամների ճնշման տակ:

Բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդիկ խտրականության են հանդիպում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ բուժօգնության, սոցիալ-հոգեբանական վերականգնման, կրթության, տրանսպորտի, հաղորդակցության, զբաղվածության, սոցիալական պաշտպանվածության և մշակութային միջոցառումների ու համացանցի օգտագործման: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ էր տեսալսողական խնդիրներ ունեցողների համար:

«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինքի» հաղորդմամբ սեռով պայմանավորված առավել մեծ է խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ, մասնավորապես սոցիալական ներառման, բուժօգնության ու վերարտադրողական ծառայությունների, զբաղվածության և կրթության հասանելիության մասով: Ազգային դաշինքի խմբի հաղորդումների համաձայն համապատասխան մարմիններն առավել հակված են մանկատներում տեղավորել հաշմանդամություն ունեցող աղջիկներին, քան տղաներին, իսկ հաշմանդամություն ունեցող կանայք առավել հաճախ են ենթարկվում ֆիզիկական ու սեռական բռնությունների:

Քրեակատարողական հիմնարկներում չկային համարժեք հարմարություններ հաշմանդամների համար: Ստանդարտներից ցածր էին նաև առավել լուրջ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հիվանդանոցային, տնային խնամքի և այլ ինստիտուցիոնալ պայմանները: Ըստ պաշտոնական տվյալների աշխատունակ հաշմանդամների ավելի քան 90 տոկոսը գործազուրկ էր:

Հելսինկյան քաղաքացիական ասոցիացիայի Վանաձորի գրասենյակը (HCAV), որն իրականացրել էր նյարդա-հոգեբուժական հաստատությունների մշտադիտարկում, 2013թ-ին հաղորդում էր, որ, համապատասխան մարմինների կողմից նման հիվանդները ենթարկվել են արժանապատվությունը նվաստացնող ու դաժան վերաբերմունքի, աշխատանքային շահագործման, չի ապահովվել պատշաճ սնունդ, վատ են եղել սանիտարահիգիենիկ պայմանները, չարաշահվել է ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը և չի ապահովվել համարժեք բուժօգնություն: Նրանց համար սահմանափակ է եղել կապի ու տեղեկատվության հասանելիությունը, իրենց իրավունքների կամ իրենց առողջական վիճակի և բուժման վերաբերյալ տեղեկություններ նրանց տրամադրվել է սահմանափակ չափով կամ ընդհանրապես չի տրամադրվել:

Հելսինկյան քաղաքացիական ասոցիացիայի անդամները և իրավապաշտպան մյուս դիտորդները հիշատակում էին կոռուպցիոն ու

մարդու իրավունքների խախտման ռիսկերը, որոնք առկա են այդ հաստատություններ ընդունելու ոչ թափանցիկ ընթացակարգերում, որոնց միջոցով անձին պարտադիր բուժման են ենթարկում նյարդա-հոգեբուժական հաստատություններում, ինչպես նաև անձին անգործունակ հայտարարելու գործընթացում: Բացի այդ, ըստ Հելսինկյան քաղաքացիական ասոցիացիայի կառավարությունը չէր հաշվառում կամ պատշաճ կերպով հետաքննում այդ հաստատություններում գրանցված մահվան դեպքերը:

Լրատվամիջոցներում հաղորդումներ են եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքո հաշմանդամության կարգերը սահմանող պետական մարմնի՝ Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի հետ կապված կոռուպցիոն դրսևորումների ու կամայական որոշումների մասին: Հաշմանդամության կարգի հիման վրա այնուհետև որոշվում է տարբեր սոցիալական նպաստների նշանակման հարցը:

Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված բռնության դրսևորումներ, խտրականություն և այլ չարաշահումներ

Խտրականության դեմ պայքարի օրենքները չեն կիրառվում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության դեպքերում: Չկան ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարող օրենքներ կամ այլ քրեական դատական մեխանիզմներ, ԼԳԲՏ համայնքի անդամների դեմ կանխակալ դրդապատճառներով գործած հանցանքներով քրեական հետապնդում իրականացնելու համար: Հասարակության վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ շարունակում էր մնալ խիստ բացասական և հասարակությունն, ընդհանուր առմամբ, դիտարկում էր նույնասեռականությունը որպես հիվանդություն (բժշկական աղետ): Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել զբաղվածության, ընտանեկան հարաբերությունների, կրթության ու

առողջապահական ծառայությունների հասանելիության վրա (տես՝ բաժին 7.դ):

Հունիսին «Հանրային տեղեկատվություն և գիտելիք» (PINK Armenia) ՀԿ-ն հրապարակել էր իր ամենամյա ուսումնասիրությունը 2014 թ.ԼԳԲՏԻ անձանց վերաբերյալ: Համաձայն գրախոսականի իշխանական կուսակցության ներկայացուցիչները և իշխանությանը կից լրատվամիջոցները հավասարություն խթանելու փոխարեն, շարունակում են ԼԳԲՏԻ համայնքի դեմ ատելության կոչերով հանդես գալ՝ ամրապնդելով երկրում անպատժելիության մթնոլորտը նշված է ուսումնասիրության մեջ՝ ավելացնելով, ԼԳԲՏ անձանց նկատմամբ եղել են ֆիզիկական բռնություններ, բռնության սպառնալիքներ, շանտաժ և ոտնձգություններ: Ոստիկանությունը չի արձագանքել նման չարաշահումների մասին հաղորդումներին և երբեմն էլ իրենց կողմից է եղել ոչ իրավաչափ վերաբերմունք ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Զեկույցում նշվել են դեպքեր, երբ ԼԳԲՏ անձանց դեմ ուղղված հանցանքների վերաբերյալ ԼԳԲՏ անձանց բողոքներին ի պատասխան ոստիկանությունը քրեական կարգով հետապնդել է բողոք ներկայացնողին՝ կեղծ հանցանք զեկուցելու համար: Արդյունքում հանցանքներից տուժած ԼԳԲՏ անձինք խուսափել են ոստիկանություն բողոք ներկայացնել:

Ըստ սեպտեմբերյան PINK Armenia տեղեկագրի, հինգ հոգի օգոստոսի 27-ի գիշերը Երևանի կենտրոնական այգիներից մեկում հարձակվել էին երկու տրանսգենդեր անձանց վրա: Երկու զոհերը թաքնվել են մոտակա հյուրանոցում՝ սպասելով հարձակվողների հեռանալուն, սակայն հետագայում հետապնդվել են հյուրանոցից դեպի գլխավոր դատախազի գրասենյակը, որը գտնվել է մոտակայքում, և գրասենյակի մոտ կրկին ենթարկվել հարձակման: Տուժողները փորձել են օգնություն ստանալ անվտանգության աշխատակիցներից, որոնք հրաժարվել են օգնել նրանց: Տուժողները ստացել էին լուրջ վնասվածքներ, մինչև անգամ՝ ուղեղի ցնցում: ՀՀՔԿ-ը քրեական հետաքննություն էր հարուցել՝ վիրավորանքի (ծեծի) մեղադրանքով, և հոկտեմբերի 7-ին, բռնության գործ էր հարուցվել մեկ անձի նկատմամբ: Հոկտեմբերի վերջին քննությունը դեռ

շարունակվել է, քանի որ իրավապահ մարմինները ձգտում էին բացահայտել և գտնել մյուս հարձակվողներին:

Այն լրատվամիջոցները, այդ թվում կառավարամետ լրատվամիջոցները, շարունակում էին ԼԳԲՏԻ-ի անձանց նկատմամբ հակաքարոզչության ակտիվ տարածումը: Ըստ PINK Armenia.ի, ԼԳԲՏԻ-ի անձիք, որոնց Facebook-ի հղումներն ընդգրկվել էին նույնասեռականների նկատմամբ խտրականության մասին մայիսին 2014 թ. Իրավունք թերթում հրապարակված հոդվածում, շարունակում էին դիմակայել սոցիալական կողմնակալ վերաբերմունքի և հետապնդումների: Նրանցից մեկը հաղորդում էր, որ ստացել էր ատելության էլեկտրոնային նամակների մի շարք, որի ուղարկողները սպառնում էին գտնել նրա հասցեն և վնասել նրան: Զբաղվածության խտրականության պատճառով, նա չի կարող աշխատանք գտնել: PINK Armenia-ն հաղորդում է, որ մասնակիցները հոկտեմբերի 17-18-ին Հայաստանում կայացած ԼԳԲՏ առաջին հայկական Rainbow Forum համաժողովից հետո ստացած բազմաթիվ սպառնալիքների առիթով ոստիկանություն են դիմել: PINK Armenia զեկույցում նշված է, որ հոկտեմբերի դրությամբ իրավապահները հետաքննություն էին իրականացնում, սակայն գործը կարճվել է «հանցակազմի բացակայության» պատճառաբանությամբ:

Ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվել են զինվորական ծառայությունից՝ ենթադրաբար առաջնորդվելով այն մտահոգություններով, որ նրանք կարող են ենթարկվել դաժան վերաբերմունքի համազորայինների կողմից: Ազատումը հիմնավորվում էր հոգենյարդաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում անձնական գործում, որը խոչընդոտ է աշխատանքի տեղավորման և վարորդական վկայական ձեռք բերելու հարցում: Զինված ուժերում ծառայող նույնասեռական տղամարդկանց նկատմամբ ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգություններ են եղել:

Արդարադատության հասարակական դիտորդական խմբի և այլ Մարդու իրավունքների ակտիվիստներ նշում են, որ բանտերում ԼԳԲՏ անձինք հաճախ դառնում են նվաստացուցիչ խտրականության թիրախ, նրանց

ստիպում են կատարել նվաստացնող աշխատանքներ, իսկ հիմնարկի ղեկավարությունը նրանց առանձնացնում է մյուս բանտարկյալներից:

ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի սոցիալական խարանը

Ժողովրդագրության և առողջության հարցերի վերջին հետազոտությամբ (անցկացվել է 2010թ.) հարցված կանանց 86.1 և տղամարդկանց 84.4 տոկոսը նշել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցողների նկատմամբ խտրական վերաբերմունքի մասին:

Երեխաների իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն 2013թ. իր ամփոփիչ դիտարկումներում մտահոգություն էր հայտնում երեխաների առանձին ենթախմբերի, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցողների նկատմամբ դե ֆակտո խտրականության դրսևորման վերաբերյալ:

Ըստ իրավապաշտպան խմբերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով խոցելի համարվող անձանց, մասնավորապես մարմնավաճառների (այդ թվում՝ տրանսգենդեր) և թմրամոլների նկատմամբ կա խտրականության ու բռնության դրսևորում հասարակության կողմից, ինչպես նաև ոչ իրավաչափ վերաբերմունք ոստիկանության կողմից:

ՀԿ «Իրական աշխարհ, իրական կյանք»-ը գրանցել էր ամուսինների դեպքեր, ովքեր վարակվել էին ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ով արտերկրում արտագնա աշխատանքի ժամանակ, և ովքեր թաքցրել էին իրենց վիճակը իրենց կանանցից: Իրենց կանանց վարակելուց հետո, ամուսինները արգելել էին նրանց օգնության կամ դեղորայքի դիմել՝ թեև ամուսինն ինքը ենթարկվել էր բուժման: Ըստ ՀԿ-ի սա դրսևորում էր, ինչպես ընտանեկան բռնության այնպես էլ սոցիալական խարանի՝ կապված ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի հետ: Medialab.am կայքը իր նոյեմբերյան զեկույցում հաղորդում էր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով վարակված մի հղի կնոջ մասին, ով ամբողջ իր հղիության ժամանակ ենթարկվել է ակնհայտ խտրականության բժշկական անձնակազմի կողմից, այդ թվում՝ բժշկական խորհրդատվության հղիությունը դադարեցնելու մասին:

Մաս 7. Աշխատողների իրավունքներ

ա. Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքով պաշտպանվում է անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու բոլոր աշխատողների իրավունքը՝ բացառությամբ բանակում ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների: Օրենքով նաև սահմանվում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրվում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Օրենքով նախատեսվում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում է այն հիմնավոր պատճառների ցանկը, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից, և այդ ցանկում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

Կառավարությունը միշտ չէ, որ ապահովել է հարգանքն աշխատանքային իրավունքների նկատմամբ: Ռեսուրսները, տեսչական ստուգումները, հատուցումներն ըստ հաղորդումների եղել են ոչ համարժեք: Չեն եղել կոնկրետ պատժամիջոցներ՝ միավորում կազմելու կամ խմբակային բանակցություններ վարելու իրավունքները խախտելու վերաբերյալ: Վարչական և դատական ընթացակարգերը եղել են ձգձգված և զուգակցվել են բողոքարկումներով:

Աշխատավորական կազմակերպությունները թույլ են մնացել երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, բացառությամբ այն արհմիությունների, որոնք կապված են եղել հանքարդյունահանման ու քիմիական արդյունաբերության ոլորտի հետ: Ըստ տեղական դիտորդների պաշտոնապես արհեստակցական միություն ստեղծելու համար գործնականում պահանջվել է գործատուի ոչ պաշտոնական համաձայնությունը:

բ. Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում են հարկադիր կամ ստրկական աշխատանքի բոլոր տեսակները, իսկն կառավարությունն արդյունավետորեն իրականացրել է այդ օրենքները: Ռեսուրսները, տեսչական ստուգումները, հատուցումները համարժեք են եղել: Խախտումները պատժվում են 5-15 տարվա ազատազրկմամբ, և այս սանդղակը բավականաչափ խիստ է խախտումները կանխելու առումով: Տարվա առաջին տաս ամսիների ընթացքում կառավարությունը հետաքննել է աշխատանքային թրաֆիքինգի երկու գործ, որոնցից մեկում մուրացկանության մեջ է ներգրավված եղել մի անչափահաս տղա:

Տես նաև Պետքարտուղարության զեկույցը *Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ* ՝www.state.gov/j/tip/rls/tiprpt/.

գ. Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Գոյություն ունեն օրենքներ և գործելակերպեր, որոնք երեխաներին պաշտպանում են շահագործումից աշխատավայրում: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը հիմնականում 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: Աշխատանքային օրենսգիրքը փոփոխվել է հունիսին՝ 14 տարեկանը չլրացրած երեխաների մասնակցությունը ժամանցային հատվածում հնարավոր դարձնելու նպատակով: 14-16 տարեկան երեխաների համար սահմանված առավելագույն շաբաթական աշխատաժամանակը 24, իսկ 16-18 տարեկանների համար 36 ժամ է: 18 տարին չլրացած անձանց արգելվում է արտաժամյա աշխատանքը վնասակար, դժվար և վտանգավոր պայմաններում, աշխատանքը տոն օրերին և գիշերային ժամերին: Համապատասխան մարմինները չեն ապահովել օրենքի արդյունավետ կիրառումը:

Ազգային վիճակագրական ծառայության և Առողջապահության նախարարության իրականացրած՝ *Հայաստանում ժողովրդագրության և առողջության հարցերի 2010թ. հետազոտության* տվյալներով 5-14 տարեկան դպրոց հաճախող երեխաների 4 տոկոսը ներգրավվել է

մանկական աշխատանքում և մեծ մասամբ՝ ընտանեկան բիզնեսում: Երեխաների իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն 2013թ. իր զեկույցում մտահոգություն էր հայտնել, որ մեծ թվով, այդ թվում 14 տարին չլրացրած երեխաներ դուրս են գալիս դպրոցից՝ աշխատելու գյուղատնտեսության, ավտոտեխսպասարկման, շինարարության, մետաղի ջարդոնի հավաքման ոչ ֆորմալ (ստվերային) ոլորտներում և ընտանեկան բիզնեսում: Կոմիտեն նշել էր փողոցներում մուրացկանություն անող և ծանր ֆիզիկական աշխատանք կատարող՝ բանվոր և բեռնակիր երեխաների թվի ավելացման մասին: Այն նաև նշել էր, որ աշխատանքային տեսչություններն արդյունավետ չեն աշխատել մանկական աշխատանքի վերահսկման ուղղությամբ:

Տես նաև՝ ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի՝ *Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները* www.dol.gov/ilab/reports/child-labor/findings/ կայքէջում:

դ. Աշխատանքային կամ մասնագիտական խտրականություն

Սահմանադրությամբ արգելվում է ցանկացած խտրականություն՝ սեռի, ռասայական պատկանելիության, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի կամ հավատքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության կարգավիճակի, գույքի, ծննդի, հաշմանդամության, տարիքի կամ այլ անձնական և սոցիալական հանգամանքների հիմքով: Այլ օրենքներով ու կանոնակարգերով հատկապես արգելվում է սեռով և գենդերային ինքնությամբ պայմանավորված՝ աշխատանքային և մասնագիտական խտրականությունը: Կառավարությունն արդյունավետ չի կիրառել այս օրենքը: Առկա չեն եղել արդյունավետ իրավական մեխանիզմներ այս կանոնակարգերը կիրառելու համար, և աշխատանքային ու մասնագիտական խտրականություն է եղել գենդերի, տարիքի, հաշմանդամության առկայության, սեռական կողմնորոշման ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու և կրոնական պատկանելիության հիմքով:

Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել նույն մասնագիտական հնարավորությունները կամ աշխատավարձերը, ինչ որ տղամարդիկ, և

գործատուները հաճախ նրանց տրամադրել են ավելի ցածրակարգ և ցածր վարձատրվող աշխատանքներ։ Աշխատանքային փոխհարաբերությունների բոլոր կողմերի համար «իրավական հավասարություն» նախատեսելով հանդերձ աշխատանքային օրենսգիրքը հստակ չի պահանջում հավասար վարձատրություն հավասար աշխատանքի համար։ 2014թ. հուլիսի իր զեկույցում Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը (ՏՍՄԻՀ/CESCR) վերահաստատել է իր մտահոգությունը կանանց շրջանում անհամաչափորեն բարձր մակարդակի գործազրկության վերաբերյալ։ Հանձնաժողովը հավասարապես մտահոգված էր ուղղահայաց և հորիզոնական գենդերային խտրականությամբ տնտեսության ոլորտում և տնտեսության ցածր վճարվող հատվածներում կանանց կուտակմամբ, չնայած կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարությանը։ Հանձնաժողովը նկատել էր վարձատրման գենդերային մեծ ճեղքվածք, որի պայմաններում կանայք վաստակում էին 2012 թվականին տղամարդկանց վաստակածի մոտավորապես 60 տոկոսը։

Շատ գործատուներ ըստ հաղորդումների խտրականություն են դրսևորել հնարավոր աշխատողների նկատմամբ՝ տարիքի հիմքով՝ հաճախ պահանջելով, որ թափուր տեղերի համար դիմեն 18-30 տարեկանները: Խտրականության այս տեսակը բավական լայն տարածում է ունեցել, մինչդեռ իշխանությունները ոչ մի գործընթաց չեն ձեռնարկել այն մեղմելու համար: Երիտասարդ և բարետես կանանց համար աշխատանքի հայտարարությունները տարբեր աշխատատեղերի համար տարածված են եղել։ Գործազուրկները, մասնավորապես 40 տարեկանից բարձր կանայք իրենց կրթությանը կամ հմտություններին համապատասխան աշխատանք գտնելու սակավ հնարավորություններ են ունեցել:

ե. Աշխատանքի ընդունելի պայմաններ

Հուլիս ամսից ամսական նվազագույն աշխատավարձը կազմել է 55,000 դրամ ($105)։ Ամենավերջին պաշտոնական հաշվարկներով 2014 թվականին ծայրահեղ աղքատության շեմը ամսական կազմել է 23,384 դրամ (44$), իսկ ընդհանուր աղքատության շեմը՝ 40,264 դրամ ($77)։

Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է, և սահմանված է տարեկան 20 օր պարտադիր արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Աշխատավայրում առողջության ու անվտանգության պահպանման ստանդարտները (չափանիշները) սահմանվել են կառավարության որոշմամբ:

Իշխանությունները այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չեն ապահովվել ո՛չ պաշտոնական և ո՛չ էլ ոչ պաշտոնական ոլորտներում: Պետական առողջապահական տեսչությունը, որտեղ աշխատում է 60 աշխատանքային տեսուչ, պատասխանատու է աշխատանքային օրենսդրության կիրարկումը, մասնագիտական անվտանգությունը և առողջապահական ստանդարտները վերահսկելու համար: Ռեսուրսները, տեսչական ստուգումները, հատուցումները չեն եղել համարժեք, և աշխատանքային ստանդարտների խախտումների համար պատժամիջոցներն էլ բավարար չեն եղել այդ խախտումները կասեցնելու համար:

Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ, հատկապես սպասարկման և մանրածախ հատվածներում չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավելի՝ առանց լրացուցիչ վարձատրության: Ըստ զբաղվածության որոշ գործակալությունների ներկայացուցիչների, շատ գործատուներ շարունակել են աշխատողներ ընդունել 10-30 օր չձևակերպված ոչ-վճարովի «փորձաշրջանով»: Հաճախ գործատուներն այնուհետև այս աշխատողներին արձակել են, բայց, քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չի եղել, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը: Աշխարհագրական մի շարք աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների ղեկավարները հաճախ օգտվել են այլ աշխատանք չլինելու հանգամանքից և անտեսել համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմանների ապահովման և

բնապահպանական խնդիրները։ Ասիական զարգացման բանկի 2011թ. տվյալների համաձայն երկրի աշխատողների կեսը զբաղված է եղել ստվերային ոլորտում: Այս աշխատողների համար չի գործել պետական որևէ պաշտպանություն:

Աշխատավայրի բազմակի ոլորտներում անվտանգության ու առողջապահական պայմանները շարունակել են չհամապատասխանել պահանջվող ստանդարտներին, և տարվա ընթացքում գրանցվել են մահացու ելքով մի շարք աշխատանքային պատահարներ։։ Նավթի և բնական գազի պոմպակայաններում արձանագրված մի շարք պայթյունների դեպքերը հանգեցրել են մահվան դեպքերի և ծանր վնասվածքների՝ տվյալ արդյունաբերական ոլորտում անվտանգության անփույթ ստանդարտների կամ անվտանգության ստանդարտների ոչ բավարար կիրառման հետևանքով։ Միջադեպերից հետո կառավարությունը հայտարարել է, որ մեծացրել է անվտանգության վերահսկողությունն ու ավելացրել կայաններում տեսչական ստուգումների թիվը։ Երկրում գործազրկության նման բարձր տեմպերի լույսի ներքո աշխատողները սովորաբար չեն հեռանում այնպիսի իրավիճակներից, որոնք վտանգում են նրանց առողջությունն ու անվտանգությունը։ Իշխանությունները որևէ պաշտպանություն չեն առաջարկել այս իրավիճակում հայտնված աշխատողներին, իսկ աշխատողներն ընդհանուր առմամբ չեն հաղորդել իրենց իրավունքների ոտնահարման մասին։